№ 163 ՇԱԲԱԹ, 30 ՅՈՒԼԻՍԻ

1911

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 30 ՅՈՒԼԻՍԻ № 163

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
ն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
IS, Rédaction du journal „MSHAK“.

Օգոստոսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 5 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԼՈՒՍ ՏԵՍԱՒ
Հ. Սենկևիչ
ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ
Թարգմ. լեհերէնից Տ. Յովհաննիսեան.
Երկրորդ, ուղղված հրատարակութիւն.
Գինն է 1 ր. 50 կ.
Տասն և աւելի օրինակ գնողներին 10% զիջում: Թարգմանչից գնողները ճանապարհածախս չեն վճարում: Վերադիր վճարով ոչ ոքի չէ ուղարկվելու:
Դիմել՝ Тифлисъ, улица Паскевича, 1. Прис.-пов. Тиграну Нерсесовичу Іоаннисянцу.
Օգոստոսին լոյս կը տեսնի
Լ. ՏՈԼՍՏՈՅԻ
„ՅԱՐՈՒԹԻՒՆ“-Ը
(15,17,20,24,30) տո. 721. 5—5

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բաժանմունքը Թիֆլիսում, Գօլ. պր. 21, տուն Արտիստակ. Ընկ., տելեֆօն № 355.
Պահեստում միշտ կան մեծ քանակութեամբ ընտիր պաստառներ ամենավերջին սեզօնի
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր ռուլօն: Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում:
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ՁՐԻ:
(և. 2.) տո. 207. 50—40

Երևանի Հ. Հ. ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ IV, V և VI դասարաններում ընդունելութիւն չը կայ: Մնացած դասարանների համար խնդիրներ (ծննդեան և ծաղկի վկայականների հետ) կընդունվեն օգոստոսի 15-ից մինչև 30-ը: Քննութիւնները կը սկսվեն սեպտեմբերի 2-ից:
Տեսուչ դպրոցի՝ Արշակ Ջիլինկարեան
տո. (6 օգ.) 746. 2—1

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք հաղորդել էինք մեր ընթերցողներին, որ այս տարվայ յոյսերը բերքի վերաբերմամբ ամենևին վարդագոյն չեն, որ հունձը մի քանի ընդարձակ շրջաններում անբաւարար է և որ հացի գինը շուկայում բարձրացել է զգալի կերպով:

Անշուշտ՝ լեռնային շրջանը դեռ չէ ասել իր ասելիքը և ուրեմն տարվայ բերքի համագումարի մասին դեռ ևս անկարելի է վերջնական վճռահատութիւն անել: Պէտք է սպասել մի քանի շաբաթ ևս՝ աւելի որոշ եզրակացութիւններ դուրս բերելու համար:

Մեզ հարկաւոր են ճշգրիտ տեղեկութիւններ բերքի դրութիւնը ճշգօրէն որոշելու համար: Եւ ցանկալի է, որ մեր գաւառական աշխատակիցները տային մեզ իրական ցուցումներ, թէ ինչ վիճակի մէջ է տարվայ բերքը զանազան տեղերում:

Եթէ խելամտութիւնը և զգուշութիւնը պահանջում են չը հրապուրվել մի քանի տեղերի լաւ բերքից և թելադրում են ներկայացնել իրերի իսկական պատկերը առանց քաշվելու և ծածկելու տխուր իրականութիւնը, միւս կողմից անհրաժեշտութիւն է զգացվում չընկնել երկրորդ ծայրայեղութեան մէջ և չը չափազանցել դժբաղդ երևոյթների բացասական նշանակութիւնը, որովհետև երկու չափազանցութիւններն էլ վնասակար են ժողովրդական տնտեսութեան համար:

Արդարև, եթէ անտեղի և թեթևամիտ լաւատեսութիւնը քնացնում է հասարակութեանը և չէ դրդում նրան հոգալ միջոցներ՝ մաքառելու հացի պակասութեան դէմ, նոյնպէս և աւելի անտեղի է բոլորովին անհիմն կերպով չափազանցել անբերրիութեան սարսափը և ստեղծել տրամադրութիւն հացի գները թանգացնելու երկրի վաճառանոցներում:

Մեզ յայտնի են տեղեր, ուր արտերը շատ լաւ բերք են տուել, բայց այդպիսի ցուցումների հանդէպ աւելի շատ են այնպիսիները, որտեղ բերքը ստոր է միջակից և նոյնիսկ այժմեանից նախատեսվում է հաց գնելու անհրաժեշտութիւնը:

Մրգերի վերաբերութեամբ յայտնի է, որ Արաքսի աւազանում պտղատու ծառերը տուել են լաւ բերք. իսկ խաղողի այգիները մնացել են համեմատաբար աննախանձելի վիճակի մէջ սնկային հիւանդութիւնների բազմանալու և երաշտի պատճառով:

Մենք արդէն հաղորդել էինք, որ ծխախոտագործների վիճակը Սև-ծովեզրեայ ափերում փոքր ինչ ընկել է շնորհիւ անբերրիութեան: Եկած անձրևները մասամբ մեղմացրին անմխիթարական վիճակը, բայց և այնպէս ընդհանուր պատկերը մնում է անբաւարար:

Յոյս ունենք, որ գաւառական մեր աշխատակիցների շնորհիւ մեր ընթերցողը գաղափար կը կազմէ տարվայ բերքի մասին այն հաղորդագրութիւններից, որ նրանք կուղարկեն մեր լրագրին:

Ս. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 յուլիսի

Պետերբուրգ.—Առաւօտեան ժամը $10^1/_2$-ին Մարսեան դաշտում Թագաւոր Կայսրը դիտեց փոքրահասակ զինւորացուներին (потѣшные), որոնք եկել են Ռուսաստանի զանազան տեղերից: Հրաւիրված անձերի թւում էին զինւորական, ծովային, ժողովրդ. լուսաւորութեան մինիստրները, երկրագործութեան գլխաւոր կառավարիչը, սինօդի օբեր-պրոկուրորը, դիպլոմատիական մարմնի ներկայացուցիչներ և այլք: Ժամը $10^1/_2$-ին եկան Մեծ Իշխաններ Անդրէյ Վլադիմիրովիչը, Նիկոլայ Միխայլովիչը, Սերգէյ Միխայլովիչը, իշխան Ալեքսանդր Ռոմանովսկին: Ժամը 11-ի սկզբին, «Շտանդարտ» զբօսանաւով եկաւ կայսրը պալատի մինիստրի և շքախմբի ուղեկցութեամբ: Կայսրը բարեհաճեց ձի նստել և անցնել փոքրահասակ զինւորացուների շարքերի առաջից, յետոյ տեսաւ նրանց կատարած վարժութիւնները, մարմնամարզութիւնը: Բարձրագոյն հանդիսադրութիւնը վերջացաւ քայլերթով, որից կայսրը հաճեց անցնել շուրջբոլոր և շնորհակալութիւն յայտնել զինւորացուներին սովորեցնող անձանց:

Հանդիսադրութեանը մասնակցում էին մօտ 6,000 տղաներ: Ժամը 1-ին Կայսրը մեկնեց Մարսեան դաշտից:

Ժողովրդական տանը փոքրահասակ զինւորացուներին ճաշ տալու ժամանակ պրինց Օլդենբուրգսկին յայտնեց, որ Կայսրը շատ գոհ է մնացել գեղեցիկ կարգ ու կանոնից: Նորին Մեծութիւնը շնորհակալութիւն է յայտնում տղաների ծնողներին և ազգականներին իրանց երեխաներին Պետերբուրգ ուղարկելու համար և դրանում տեսնում է երիտասարդութեան կանոնաւոր դաստիարակութեան գրաւականը, երիտասարդութեան, որից կոփվում են գահի և հայրենիքի հաւատարիմ սպասաւորներ:

Լոնդոն.—Թագաւորը, մնաս բարով ասելով Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնային և Ալեքսանդրա Թագուհուն, մեկնել է Սանդրինգէմի պալատից Լոնդոն:

Պարիզ.—Հաւասի գործակալութիւնը հերքում է Բրիւսէլի «Պէպլ» լրագրում լոյս տեսած այն տեղեկութիւնը թէ իբր արտաքին գործերի մինիստր Դեսէլվը Կայոյի հետ խօսելիս յայտնել է, թէ մտադիր է պահանջել չարձակել այն զինւորներին, որոնք պահեստով ցրվելու են իրանց տները, այն դէպքում, երբ ֆրանս-գերմանական բանակցութիւնները չեն վերջանայ յուլիսի վերջերի մօտերը:

Լիսաբոն.—Ազգային ժողովը 123 ձայնով 50-ի դէմ որոշեց չը հաստատել հանրապետութեան նախագահին կից փոխ-նախագահների պաշտօնները:

Հռոմ.—Պապի առողջութեան մէջ փոփոխութիւն չը կայ:

Վիէննա.—Լրագիրների ասելով, զինւորական մինիստրի հետ միասին հրաժարական են տալու գեներալ շտաբի պետ Ֆօն-Հէնցենդորֆը և գահաժառանգի զինւորական դիւանատան կառավարիչ Ֆօն-Աարէնաուն:

Կոպէնհագէն.—Ստորագրվեց միջնորդ դատարանի մասին դանիական-ֆրանսիական պայմանագիրը:

Կէօլն.—«Կէօլնիշէ-Ցայտունգին» Բեռլինից պաշտօնապէս հաղորդված է, որ այն լուրերը, թէ իբր կայսրի և նրա խորհրդատուների միջև տարաձայնութիւններ գոյութիւն ունեն մարոկկեան հարցի վերաբերմամբ, թէ իբր Կիդերլէն-Վեխտերը սկզբում առաջադրել է Ֆրանսիային խոշոր պահանջներ, յետոյ կայսրի միջամտելուց բաւականին կրճատել է նրանց, մտացածին են: Լուրերն անուանում են ոչ հայրենասիրական:

Սօֆիա.—Գեշօվը, «Պոլկօրի» թղթակցի հետ խօսելիս, ի միջի այլոց ասաց. «Կառավարութիւնը խաղաղասէր է և բաւականին համբերատար ու կայուն ամեն տեսակ փորձութիւններին դիմանալու համար: Դա միանգամայն համապատասխան է ժողովրդի տրամադրութեան, որ կամենում է հաշտութեան ֆակտօր լինել Բալկանում»:

Կադիկս.—«Նումանցիա» ռազմանաւի վրա բռնկված ապստամբութեան պատճառով մի նաւաստի զինւորական դատարանից ենթարկվեց գնդակահարութեան, մի քանիսը ցմահ տաժանակիր աշխատանքների: Չը նայած ընդհանուր գործադուլի սպառնալիքին, դատավճիռը գործադրվեց:

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 յուլիսի

Կ. Պոլիս.—Մինիստրների խորհուրդը վճռեց թոյլ չը տալ ամբողջ Ալբանիայի վրա տարածել մալիսօրներին տրված արտօնութիւնները:

Վիէննա.—«Նէյէ-Ֆրէյէ-Պրեսէն» տըպել է թիւրքաց զինւ. մինիստր Մահմուդ-Շէվքէթ փաշայի հետ կայացած խօսակցութիւնը: Մինիստրը հաստատել է, որ մալիսօրներին թոյլատրված է զէնք կրել, չէ նշանակված հայրենիք վերադառնալու ժամանակը: Ալբանական զօրամասերն առ այժմ կը մնան երկրում: Մալիսօրները, որոնք պարտաւոր են կրել զինւորական ծառայութիւն, անպայման մնալու են Ալբանիայում: Հարաւային ալբանները նոյնպէս զինւորական ծառայութիւն են ունենալու հայրենիքում:

Ուրմիա.—Շէյխ Աբդիւլ-Կադըրը կանչեց քիւրդական ցեղի բոլոր պարագլուխներին և պարտաւորեցրեց նրանց երդումով՝ չը միջամտել պարսկական գործերին առանց նրա թոյլտուութեան:

ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
28 յուլիսի

Լոնդոն.—Նաւամատոյցի մօտերը քաղաքային թաղամասում տեղի ունեցաւ ընդհարում ոստիկանութեան և գործաթող բանւորների միջև:

Լոնդոն.—Օստինդեան նաւաշինարանում տեղի ունեցան անկարգութիւններ և ընդհարում ոստիկանութեան հետ: Մի քանի մարդ ստացան վէրքեր: Բանւորների և նաւատէրերի լիազօրները համաձայնութիւն կայացրին քարածուխ բեռնողների և տէրերի միջև: Ոստիկանապետը, ներքին գործերի մինիստր Չըրչըլը, պետական գանձատան կանցլէր Լլօյդ-Ջօրջը և զինւորական մինիստր Խօլտէնը խորհրդակցեցին երկաթուղային ծառայողների գործադուլին վերջ դնելու միջոցների մասին:

Գործադուլից առաջ եկած կացութիւնը չափազանց սուր կերպարանք է առել: Ծովափերին կուտակված են ապրանքներ և ուտելիքներ. փողոցները լի են կատաղած ամբոխով, որ յարձակումներ է գործում ապրանքներ տանող սայլերի վրա: Ոստիկանութեան թիւը պակաս է: Բէնզինի պաշարը սպառվում է, որի պատճառով աւտօմօբիլները՝ ստիպված՝ երկու օր յետոյ չեն աշխատելու:

Ամստերդամ.—Նաւաստիների ժողովում վճռվեց աշխատանքները վերսկսել:

Լիվէրպուլ.—Առաւօտեան ձեռք առնըվեցին եռանդուն միջոցներ՝ դատարկելու կենտրոնական կայարանը, ուր կուտակվել են բազմաթիւ ապրանքներ: Այդ գործի համար շատ աշխատեց ոստիկանութիւնը, որ անընդհատ գործի էր հանում բէզինի ձեռնափայտեր: Բիրմինգհամից հաղորդում են, որ այնտեղ գնացած հարիւր ոստիկանները հանդիպել են ամբոխի հայհոյանքին և նրա նետած ամեն իրերին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Մի ընդհանուր կարծիք է տիրում մինչև այժմ, որ պետական դպրոցները, գտնվելով աւելի բարեկեցիկ դրութեան մէջ, տալիս են աւելի մեծ արդիւնք, քան թէ մեր ծխական դպրոցները:

Այժմ ես մի կողմ կը թողնեմ այն հարցը, թէ որքան այդ կարծիքը համապատասխան է իրականութեանը, և խօսքս կը մասնաւորեցնեմ հայոց լեզուի դասաւանդման եղանակին մեր պետական դպրոցներում:

Լեզուի մէջ է կայանում այն ամենամեծ ֆակտօրը, որ պահանջվում է գիտութիւն ուսանելիս. լինի լեզուն պարզ, քաղցր և դիւրըմբռնելի, ուսումն էլ կը իւրացվի աւելի հաստատուն և արագ: Երևակայեցէք այն երեխայի դրութիւնը, որ իմանալով միայն իր մայրենի լեզուն՝ պատմութիւն կամ մի այլ գիտութիւն է սովորում անհասկանալի օտար լեզւով: Նա եթէ ջանասէր է, կը սովորի այն, ինչ որ իրան է յանձնված, սակայն ոչ թէ գիտակցաբար, այլ միայն մեքենայաբար, բերանացի. կը սովորի, բայց չի հասկանայ:

Այդ է ահա պատճառը, որ պետական դպրոցներում օտարազգի մանուկն աւելի ուշ է հասունանում մտաւորապէս՝ տիրապետող լեզուին և ընտելանալուց յետոյ միայն:

Պետական դպրոցում հայ մանուկը առաջին օրերից իսկ սնվելով օտար լեզւով, տարիների ընթացքում մարզվում է կատարելապէս այդ լեզւում, որը և դառնում է նրա հարազատը, մայրենին: Իսկ մայրենի լեզուն կատարելապէս բացակայելով դպրոցից՝ կորցնում է աշակերտի աչքում իր հրապոյրը և տեղի տալով իրանից աւելի ուժեղ լեզուին արագութեամբ անյայտանում:

Միակ բանը, որ մնացել է դեռևս պետական միջնակարգ դպրոցներում իբրև հայ տարրի գոյութեան ապացոյց, դա հայոց լեզուի խղճուկ դասաւանդումն է, որ սակայն ուսման դասընթացքի կէսում դադարեցվում է, գուցէ հէնց այն երկիւղից, որ հայ մանուկը մինչև վերջին դասատունը սովորելով մայրենի լեզուն՝ կազդվի տանից:

Ես այստեղ կանգ չեմ առնի պարզաբա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏՈՒՄ

(հանդիպումներ և տպաւորութիւններ)

II

Առաջադիմութեան զոհ

Իգդիրի շրջանի մի շարք գիւղեր անցնելուց յետոյ, յայտնում են, որ շրջանի ամենալաւ հայ գիւղն է համարվում X-ը:

— Նրանց նման բամբակ ոչ ոք չունի. հացի կողմից էլ լաւ են,—վկայում է ինձ ուղեկցող իգդիրցի երիտասարդը:

— Այդ գիւղում ումից կարող եմ ուզածս տեղեկութիւններ ստանալ,—հարցնում եմ ես ուղեկցիս:

Նա, առանց տատանվելու, տալիս է այդ գիւղացի Գ. Վ.-ցի անունը:

Սոսկալի, մինչև 38 աստիճանի հասնող շոգին, փոշակոլոլ, անդադար քրտինք սրբելով, տուով հասնում ենք շրջանի «ամենալաւ հայ գիւղը»:

Օրը կիրակի է. գիւղում աշխատանքներ չը կան. գիւղացիների մեծ մասը, նստած՝ գիւղի գլխաւոր «փողոցի» կենտրոնական մասի խանութների առաջ, խօսում է այնպիսի բարձր ձայնով, որ հեռուից թւում է, թէ գիւղում կռիւն արդէն սկսվել է:

Երբ մօտեցանք, բանից դուրս եկաւ, որ ամենախաղաղասիրական խօսք ու զրոյցն է այդ, որ իր մէջ պատերազմասիրական ոչ մի տարր չէր պարունակում:

Մօտեցանք գիւղացիների խմբին. բարևեցինք. բոլորը լռեցին, մեր բարևին բարևեցին և հարցական նշան դարձան:

Բացատրելով մեր այցելութեան նպատակը, հարցրի, թէ ումից կարող եմ գիւղում եղած գիւղատնտեսական աշխատանքների մասին ճիշդ տեղեկութիւններ ստանալ:

Բոլորն էլ առանց տատանվելու տուեցին ինձ իրանց համագիւղացի Գ. Վ.-ցի անունը և միաժամանակ ցոյց տուին նրա տունը:

Մենք մեր քայլերն ուղղեցինք դէպի այն կողմը:

Հազիւ էինք մի 10 քայլ անցել, երբ գիւղացիների մէջ սկսվեց մի ինչ-որ փըսփըսոց, կցկտուր խօսակցութիւն, որի գաղտնիքը յետոյ միայն իմացայ:

Մի քանի րոպէից կանգ առանք գիւղական մի խանութի դռան առաջ:

Ներս մտանք: Խանութում կուպր էր կըշռում 30—35 տարեկան՝ գիւղական հաստատուն և խոշոր դիմագծերով մի մարդ:

Դա մեր փնտռած և մեզ մատնացոյց արված Գ. Վ.-ցն էր:

Տեսնելով մեր ձեռքին մի քանի պայուսակներ և քսակներ՝ նա փոքր-ինչ այլայլվեց:

Ուղեկիցս՝ իգդիրցի երիտասարդը բարևեց՝ և ասաց.

— Գիտես, Գալուստ, եկել ենք քեզ խուզարկելու. հրաման կայ:

Գալուստը գոյնը գցեց. չիմացաւ՝ հաւատայ թէ ոչ:

— Ոչինչ,—ասաց նա,—ուրիշ բանի սովոր չեմ, իսկ խուզարկութեան՝ ինչքան կուզէք:

Ինձ զարմացրեց գիւղացի խանութպանի մաքուր հայերէնը:

Ես իսկոյն միջամտեցի, յայտնեցի ով լինելս, մեր այցելութեան նպատակը:

Գալուստի դէմքի արտայայտութիւնը իսկոյն փոխվեց:

— Բարև էք եկել, Աստուծու բարևով էք եկել. վերջապէս մեր գիւղն էլ եկաք. օ, եթէ իմանաք թէ ինչքան բաներ ունեմ ձեզ յայտնելու, ձեր խորհուրդը հարցնելու:

Եւ, առանց ժամանակ կորցնելու, նա սկսեց պատմել իրանց բամբակների մասին, դրանց վրա երևցած «չոռ» հիւանդութեան, դրան բժշկելու միջոցների, իր արած փորձերի, նոր ստացած սրսկիչ Վերմօրելի ապարատի, դրա պակասութեան մասին:

Լսելով դրան, ես ինձ զգում էի խօսելիս մի հմուտ գիւղատնտեսի հետ, որը մանրազննին հետևել է բնութեանը, բուսականութեանը, սպօրների զարգացման պրօցեսը, դեղերի գործած ազդեցութիւնը դրանց վրա, մեքենաների ներքին կազմի թերութիւնները և այլն:

Առանց երկար սպասելու, նա ուղարկեց տուն և բերել տուեց մեքենան, լցրեց ջրով և հէնց այստեղ՝ փողոցում ցոյց տուեց ինձ մեքենայի պակասութիւնը, սրսկելու լաւագոյն եղանակը և խնդրեց մի ճար անել՝ բերել տալ իր համար նրա պահեստի մասերը:

— Առանց դրանց անկարելի է մեր պայմաններում կանօնաւոր գործ անել,—բացատրեց Գալուստը.—բուժումը չը պէտք է կանգ առնի և ոչ մի օր, քանի դեռ հիւանդութիւնը յաղթված չէ. իսկ յաղթել նրան կարելի է անընդհատ կռւով. դեղերը շատ նելու պետական միջնակարգ դպրոցներում հայոց լեզուի դասաւանդման եղանակը և նրա տուած խղճուկ արդիւնքները, քանի որ ամէն մի հետաքրքրվող քաղաքացի անհատ կարող է մանրամասնօրէն անմիջապէս ծանօթանալ։ Խօսքս կը մասնաւորեմ մեր գիւղական պետական դպրոցներին, որոնք այնքան էլ ծանօթ չեն հայ հասարակութեանը։

Գիւղական դպրոցներում պարզ է, որ իրերը նոյն դրութեամբ չեն պատկերանում, ինչպէս որ է քաղաքներում, քանի որ այստեղ օտար լեզուի ազդեցութիւնը հայ մանուկները կրում են միայն դպրոցում՝ դասաւանդման միջոցին, իսկ տանը և դասամիջոցներին տիրապետող է հանդիսանում մայրենի լեզուն, այն էլ ի հարկէ կոպիտ գաւառաբարբառը։

Ընդհանրապէս մեր իրականութեան մէջ չը կայ մի դպրոց, ուր աշակերտներն այնքան սահմանափակ զարգացութեան և գիտութեան տէր լինեն, քան է գիւղական պետականը։ Նախ՝ ուսուցիչները, գլխաւորապէս լինելով ոչ լայն կրթութեան տէր անձինք (մեծ մասամբ անկիրթ անձնաւորութիւններ են, որ մի կերպ քննութեամբ ստացել են տարրական դպրոցների ուսուցչական ցենզ), ըստ իրանց հասկացողութեան ուսումնական գործը տանում են խստապահութեամբ և մեքենայական ուսուցման գերակշռութեամբ։ Ամէն մի սովորելիք բան պահանջվում է շատ լաւ բերանացի առնել, առանց նոյնիսկ իմաստը հասկանալու։

Առիթ ունեցանք մի անգամ ներկայ գտնվել գիւղական պետական երեքդասեան մի դպրոցի V բաժ. ռուսաց լեզուի դասին. ուսուցիչը հարցնում էր քերականութիւնից զանազան կէտեր, աշակերտները ապշօրէն լսում էին. բայց բաւական է, որ ուսուցիչը սկսի ասել միայն մի քանի բառ բերան արած օրէնքներից, որպէսզի ամբողջ դասարանը ոգևորութեամբ կարկտի նման թափի իր անգիր գիտեցածը։ Աշակերտը գիտէ ամբողջ քերականութեան (կամ այլ առարկաների) օրէնքները հիանալի կերպով, բայց բաւական է, որ փորձես բացի մի քանի անգիր արած օրինակներից ուրիշ մի քանի օրինակներ պահանջել, որպէսզի հանդիպես նրա՝ ապուշ և զարմացած հայեացքներին։ Աշակերտը հիանալի կերպով գիտէ պատմութիւն, մատեմատիկա, բնական գիտութիւններ... առանց մի բան իմանալու։

Մի բան էլ, որ սոսկում է ազդում և փչացնում մարդուն, դա քննութեան ժամանակ տիրող դաժանութիւնն է։ Կոմիսիայի առջև կանգնող երեխան ոչ թէ իբրև մի ուսումնածարաւ մարդ է նկարվում ուսուցիչների աչքի առջև, այլ մի թշնամի, որին պէտք է աշխատել խորտակել։ Հարցեր հարցերի ետևից թափվում են խեղճ մանկան վրա զանազան կողմերից, որոնց միայն ամուր հաստատակամութիւն ունեցող անհատը կարող է դիմանալ։ Հէնց այդ է ահա պատճառը, որ պետական դպրոցներում դասարանում երկրորդ տարին մնացողները և դպրոցից խապառ դուրս վռնդվողներն այնպիսի հսկայական տոկոս են կազմում։

Բայց թողնենք դրանք, անցնենք գլխաւոր կէտին։

Այս անցած մայիսին ես բաղդ ունեցայ վերջացնելով մեր՝ ծխական երկդասեան դպրոցի Դ. բաժանմունքի վերջնական ձևական քննութիւնները—որոնք այնքան հիացմունք էին պատճառել թէ մեզ՝ դասատու ուսուցիչներիս, թէ իրանց՝ աշակերտներին և թէ ներկայ գտնվող փոքրաթիւ հասարակութեանը իրանց պարզ բնոյթով ողողված փոխադարձ սիրով ու վստահութեամբ և, որ գլխաւորն է, աշակերտների ցոյց տուած մտաւոր ինքնուրոյն բարձր գիտակցութեամբ —քայլերս ուղղել դէպի նոյն (Հաղրութ) գիւղի պետական երկդասեան (6 տար. դասընթացքով) դպրոցը, ներկայ գտնվելու վերջին բաժանմունքում հայոց լեզուի քննութեանը։ Ներկայ էին (կարմիր սեղանի շուրջը) համարեա բոլոր ուսուցիչները (7 հոգի), մանաւանդ որ հայոց լեզուի հետ զուգընթացաբար քննում էին և մի ուրիշ առարկայից։ Շատ էի հետաքրքրվում տեսնել հայոց լեզուն այն հիմնարկութեան մէջ, ուր ստանում են իրանց մտաւոր պաշարը մօտ 300 հայ մանուկներ։ Ճիշդ է, մի մեծ բան չէի սպասում, սակայն կարծում էի, որ գոնէ քիչ չափով կը տիրապետեն մայրենի լեզուին։

Աւագ ուսուցչի (թէ սա և թէ ուրիշ երկու ուսուցիչներ հայ են ազգով) հրամանով դուրս եկան աշակերտական նստարանների շարքերից 2 հոգի և կանգնեցին կարմիր սեղանի առջև։

— Ասա «Սերմնացանը»,—հրամայեց հայերէնի ուսուցիչը՝ թեմականաւարտ երիտասարդ մի քահանայ։

Բայց նրա խօսքի վերջին հնչիւնները դեռ ևս չէին հանգել, երբ աշակերտը ահեղ հեղեղ կարկտի նման թափեց մեր գլխին անգիր արած ամբողջ ոտանաւորը մի քանի րոպէում։ Ապա ձևի համար հարցրին մի քանի բառերի իմաստը միայն և քերականութիւնից մի քանի օրէնքներ (ի հարկէ անգիր արած)։ Գրել տուին և գրատախտակի վրա մի բառ, որի մէջ յայտնվեց 4 տառասխալ։

— Շատ լաւ, 5 (ասենք՝ միևնոյն է. հայոց լեզուից և կրօնից պետական դպրոցներում 5-ից պակաս չէ կարելի նշանակել)։

Հետևեալ աշակերտներից 3-ին նոյն քննութեան ձևը և բաղդն ընկաւ։ Ես զայրոյթս զսպելով սպասում էի, որ գոնէ գրաւոր աշխատանք, կամ գոնէ մի որևէ կարդացած յօդուածի ինքնուրոյն պատմութիւն կառաջարկեն աշակերտներին, բայց բանից երևաց, որ բացի արտագրութիւնից և շատ թեթև թելադրութիւնից՝ ուրիշ ոչինչ չի եղել դպրոցական կեանքում։

Չը կարողանալով տանել այդ խայտառակութիւնը, ես չը սպասեցի քննութեան վերջին և հէնց սկզբից հեռացայ դպրոցից։

Վեց տարվայ սովորածն է եղել ահա հին խրթին ոտանաւորների (որոնց չը գիտեմ էլ թէ որտեղից է գտել «ուսուցիչը») հսկայական կոյտը. և ուրիշ ոչինչ, իսկ խակական լեզուն, գոնէ նրա մի փոքրիկ մասը՝ դա կարևոր չէ։ Հայ լեզուն ոչ թէ չը կայ (ի հարկէ ուսանելի, խակական լեզուի մասին է խօսքս), այլ մինչև անգամ սխալ ուսուցմամբ կործանում են երեխայի մտաւոր ամեն մի ընդունակութիւն։

Այսպիսով ուրեմն մենք տեսնում ենք, որ գիւղական դպրոցն էլ ենթակայ է այն չարաբաստիկ դրութեան, որի մէջ գտնվում է միջնակարգ դպրոցը։

Հայ մանուկը սովորում է ամեն բան, բացի իր մայրենի լեզուից. իսկ դա մի մեծ չարիք է, որ մեր հայ ուսուցիչները հասցնում են հայ մատաղ սերնդին, հետևաբար և մեր ապագային։

Արդ՝ ով պէտք է այս չարիքի առաջն առնի. միայն և միայն ինքը՝ դասատու ուսուցիչը,—մանաւանդ դպրոցի գլխաւոր ուսուցիչը հայ է,—իր ընկեր միւս հայ ուսուցիչներով։

Սակայն մենք դրա հակառակն ենք տեսնում։

Գալով կրօնին, կասեմ միայն այն, որ այդ առարկան դասաւանդելով միայն գռեհիկ և մոլեռանդ տէրտէրները՝ պղտորում են նրան, զրկում բարոյագիտական տարրից և դարձնելով այդպիսով մի տձև, այլանդակ ու անհամ նիւթ՝ ոյժով ներս խոթում խեղճ երեխաների ուղեղները։

Այսպիսով ուրեմն այն երկու գլխաւոր ֆակտորները, որոնք հանդիսացել են շարունակ իբրև հայ ազգի գոյութեան հիմնաքար, այժմ չքացել են մեր պետական դպրոցներում։

Խա-գէթ

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ ԵՒ ԱՅԺՄ

Ամուսնալուծութիւնը 80-ական և 90-ական թւերում շատ աննշան թիւ էր կազմում, նոյն իսկ մատներով կարելի էր հաշւել. իսկ այժմ կոնսիստորիաները խրված են միայն այդ տեսակ գործերով. կոնսիստորիաները լիքն են բողոքաւորներով մարդը՝ կնոջ դէմ և կինը՝ մարդու։ Կոնսիստորիաները անելանելի վիճակի մէջ են՝ ծագած նորանոր բարդ խնդիրների դիմաց։

Սկիզբներում պսակը լուծվում էր միայն և միայն «բանի պռնկութեան» համար։ Եկեղեցական այդ մեծ խորհուրդը անքակտելի է, «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ», իսկ լուծելի է համարվում, երբ մէջտեղ էր գալիս «պռնկութիւնը». այդ՝ լինի մարդու թէ կնոջ կողմից, միևնոյն է։

Քսաներորդ դարում կանայք էլ են ուզում հասնել մարդկանց իրաւահաւասարութեան աստիճանին և հայ կինը, որի քիթկալը փոխարինել է բաց բերանի և չարղաթը՝ չիքլի կամ բաց գլխի, երևան հանեց մի ծանր հանգոյց, որի առաջ հոգևոր իշխանութիւնը չը կարողացաւ պաշտպանել «զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ»-ի սկզբունքը և յետ նահանջելով՝ առաջ բերեց դարձեալ պսակի լուծման խնդիր։ Այդ՝ մարդու առնական անկարողութիւնն է։ Կինը բողոքում է, որ ինքը ահա 2—3 տարի ամուսնացած է, բայց զրկված է կեանքից..., և խնդրում է լուծել իր պսակը, թոյլ տալով իրան մտնել նորամուսնութիւն մի ուրիշի, այլ կերպով ասած՝ առնական կարողութիւն ունեցողի հետ։ Իշխանութիւնը չը կարողացաւ որևէ պատճառաբանութիւն գտնել և պաշտպանել «զուգեաց»-ի սկզբունքը և լուծեց պսակը և այդ դէպքում։ Ուրեմն նախկին տարիներում պսակը լուծվում էր միայն «բանի պռնկութեան» և «անկարողութեան» դէպքերում։

Բայց ժամանակը, որ ոչ մի բանի չէ սպասում, ստեղծեց նորանոր բարդութիւններ։ Հին ժամանակներում խելագարութեան դէպքերում թէ մարդու և թէ կնոջ կողմից հաւատարմութեան ուխտը պահվում էր սրբութեամբ մինչև մէկի կամ միւսի մահը։ Այժմ այդ սպասողական դրութիւնը վերացված է և առողջ կողմը իր պահանջն է դրել՝ ամուսնանալ մի ուրիշի հետ։ Հոգևոր իշխանութիւնը դարձեալ չը կարողացաւ «զուգեաց»-ի սկզբունքը պաշտպանել և լուծեց խելագարվածների պսակները, միայն խելագարվածների նիւթական բարոյական վիճակն այսպէս որոշելով. եթէ ծնողներն ապահով են՝ իրանց խնամատարութեան տակ առնեն հիւանդին, հայթայթելով նրա ապրուստը. իսկ եթէ աղքատ են, այն ժամանակ մարդը պիտի ապահովէ իր աղքատ կնոջ վիճակը՝ վճարելով նրան մի որոշ ամսական։ Վերջերս սկսեց լուծվել և կաթուածահարների պսակը, դարձեալ ապահովելով հիւանդ կնոջ վիճակը։ Այսպէս, ուրեմն, պսակը լուծվում է չորս դէպքերում՝ պռնկութեան, առնական անկարողութեան, խելագարութեան և կաթուածահարութեան։

Մնացած բարդութիւնները մնում են անլուծելի, և այսօր հարիւրաւոր կենակիցներ մնում են բաժան-բաժան, իրանք իրանց լուծված, առանձին-առանձին ապրելիս։ Մէկի կինը լեզուագար է, անկարելի է նրա հետ ապրել, ամեն օր կռիւ է, հայհոյանք, ծեծ, անարգանք։ Նրանք խնդիր են տուած լուծելու իրանց պսակը, բայց յարգանք չեն գտած։ Նրանց խնդիրը մերժված է, բայց կենակիցները ապրում են առանձին-առանձին։ Միւսի մարդը արբեցող է, գող և տանը այլ ևս բան չէ թողել, գողացել-տարել է վաճառել, գինու տուել՝ խմել, գողացել է նոյնիսկ կնոջ կօշիկները, շապիկները և ալլուխները։ Տանը տիրում է սաստիկ չքաւորութիւն։ Կինը բաժանված է ամուսնուց, խնդիր է տուել կոնսիստորիային, բաժանման հարց բարձրացրել, բայց մերժումը ստացել։ Սակայն չը նայելով դրան նրանք ապրում են առանձին։ Միւսի մարդը թղթախաղի գերի է, տանն այլևս բան չէ թողել, տանուլ է տուել։ Կինը անկարողանում է այդպիսի մարդու հետ ապրել և բաժանման հարց է դրել, բայց մերժումն է ստացել։ Երրորդի ամուսինը հայհոյաբան է, ամեն օր կնոջ ծնողներին է յիշում, մեռելների խունկը, ձէթը, մոմը, երեսքաշը, գերեզմանը, գերեզմանաքարը, կողքաճաղը, գագաթը և այլն. կինը այսպիսի մարդու հետ ապրել չէ ուզում, բաժանման հարց է դնում, բայց մերժումն է ստանում, որովհետև հիմք չը կայ լուծելու պսակը։ Այսպիսով հարիւրաւոր մարդ և կին՝ անջատված իրարից՝ ապրում են բաժան բաժան, որովհետև հոգևոր իշխանութիւնը հիմք չէ գտնում լուծելու նրանց պսակը։ Եւ մարդիկ իրանց՝ համար ծածկաբար կին են պահում, իսկ կանայք մարդիկ։ Մեր համեստ կարծիքով՝ իշխանութիւնը պէտք է ամուսնական խնդրին մի փոքր լայն հայեացքով նայել։ Ամուսնութիւնը սէր է, ինչպէս Քրիստոս սիրեց իր եկեղեցին, այնպէս էլ մարդը պիտի սիրէ իր կնոջ, բայց երբ սիրոյ փոխարէն ատելութիւն է տիրում, այն ժամանակ ուրիշ ելք չը կայ, եթէ ոչ լուծելու նրանց պսակը և թոյլ տալու երկուսին էլ ամուսնանալ ուրիշի հետ և հարիւրաւոր մարդկանց և կանանց ազատել իրանց կրած տառապանքներից։

Պէտք է լուծել այն բոլոր պսակները, որոնք իրանք-իրանց լուծված են, որոնց մէջ սիրոյ փոխարէն ատելութիւն է տիրում։ *

Շուշի, 21 յուլիսի

ԾԱՂԿԻ ՄԱՍԻՆ

Մօսկվայից՝ Վահան Մամիկոնեանը նորերս «Մշակի» № 154-ում տպել է մի յօդուած «Անմեղ զոհեր» վերնագրով, ուր խորին ցաւով խօսում է «ծաղկի» համաճարակի մասին Ախալցխայում, ուր, ըստ հեղինակի, «ծաղիկը հնձում է մանուկներին և նա՝ անշուշտ կանցնի գիւղօրայքը, ուր աւելի մեծ կը լինի զոհերի թիւը՝ շնորհիւ խորին տգիտութեան գիւղական տարրի, մանաւանդ կանանց, որոնք բացի տգիտութիւնից՝ գտնվում են նախապաշարմանց տակ, որը աւելի ևս սաստկացնում է՝ ի միջի այլ տարափոխիկ հիւանդութիւնների՝ պատուհասի ծաղկից հասած պատուհասը։ Հայ գիւղական կինը այն կարծիքի է, որ ծաղիկը տարածում են սրբերը և այդ հիւանդութեան դէմ ձեռնարկել որևիցէ՝ խելացի, կուլտուրական երկիրներում լայն գործադրվող միջոց՝ նշանակում է միզանչել ծաղիկ տարածող սրբի դէմ»։ Այդ նախապաշարման մասին գրել եմ ես, գրում է՝ գիւղական կեանքին լաւ ծանօթ՝ Ս. Տ.-Աւետիքեանը իր յօդուածներում։

Մենք՝ մեր պաշտօնավարութեան ժամանակ, ծաղկի պատուաստի վրա առանձին ուշադրութիւն ենք դարձրել, տեսնելով առաջինը՝ նրա հասցրած արհաւիրքը խեղճ գիւղական երեխաներին և երկրորդ՝ աւելի դիւրին և կարելի է ասել փրկարար միջոց ունենալով ծաղկի պատուաստի մէջ՝ թէ մինչև ծաղիկ երևալը և թէ համաճարակի ժամանակ։ Եւ որովհետև արքունական ծաղկահատները ամբողջ գաւառում միայն երկուսն են՝ տարեկան ամեն մէկը 60 ռ. ռոճիկով, որի համար ես սովորեցնում էի թէ քահանաներին, թէ ուսուցիչներին և ով որ կամենում էր, ի վերջոյ՝ տալով նրանց գործիք և «մայեա» պատուաստի։

Քահանաներից մէկին մինչև անգամ նշանակել տուի ծաղկապատուաստիչ։ Իմ դիտողութիւնն այդ փորձերից՝ շատ մխիթարական էր։ Ժողովուրդը այնպէս համոզվել էր պատուաստի կարևորութեան մէջ, որ շատերը, երբ՝ մանաւանդ՝ երևում էր ծաղկի համաճարակ, իսկոյն շտապում էին երեխաներին բերել բուժարանը պատուաստելու։ Նա համոզվել էր գլխաւորապէս՝ քիչ նախապաշարված՝ արական տարրը, որ պատուաստով կարելի է թէ նախապաշտպանել երեխաներին ծաղկի վարակից մեծ չափով և թէ համաճարակի ժամանակ աջողաբար վերջ տալ նրան, պատուաստելով դեռ չը հիւանդացած երեխաներին՝ թէ նոյն գիւղում և թէ դրացի գիւղերում։ Եւ եթէ ուրիշ ժամանակներին գիւղացին այնքան էլ մեծ եռանդով չէ ցանկանում երեխային պատուաստել, համաճարակի ժամանակ՝ մի առանձին՝ հասկանալի ցանկութիւն ունի երեխաներին պատուաստել տալու։ Մեր բժիշկները—հայերէնագէտ— ի միջի այլոց՝ և մենք քանիցս գրած ենք ծաղկի պատուաստի մասին՝ մինչև անգամ ընդհանուր մամուլում՝ «Մշակում» և այլն, բայց դարձեալ հարկաւոր է գրել ու գրել, մինչև որ պատուաստի փրկարար գաղափարը կը դառնայ անհերքելի ճշմարտութիւն՝ մեր շատ տգէտ ժողովրդի մէջ։ Ուրեմն թոյլ ենք տալիս բերել այստեղ մի քանի ապացոյցներ ձեռքիս տակ գտնվող յայտնի Բիբինգի «Առողջապահութիւն» գրքից՝ ծաղկի մասին և մանաւանդ պատուաստի կարևորութիւնով։

Ծաղիկը շատ հին ժամանակներից՝ յայտնի է. նրա հայրենիքը համարվում են Հնդկաստանը և Կենտրոնական Աֆրիկան։ Նա՝ ըստ Moore-ի՝ չինացոց գրուածներով յայտնի էր 1122—249 մինչև Քրիստոսի ծնունդը։ Սկսած X դարից՝ ծաղիկը յայտնի եղաւ Հին Աշխարհում, և նկարագրում էին միջնադարեան բժիշկները. յետոյ՝ արդէն նա տարածվեց միւս երկիրները։ Հնդկաստանում ծաղիկը ցայժմ տիրում է աւելի զօրեղ կերպով, քան խոլերան։

Բոմբէյի և Կալկաթայի նահանգներում 1866—69-ին 40 միլիոն ազգաբնակութիւնից վախճանվել են 140,000 հոգի։ Ծաղիկը պատկանում է ամենակորստաբեր հիւանդութիւններին։ Նա ընդարձակվում է, բարդվում է յետագայ բարդութիւններով՝ կարմիր քամիով (рожа), հատատեղերի և մէջքի վրա երկար պառկելուց՝ խոցերով (пролежна), ուղեղաթաղանթի բորբոքումներով, անդամալուծութեամբ (параличъ), կուրութեամբ (слѣпота)—6% բոլոր հիւանդացածների—խլութեամբ և ականջների բորբոքմամբ (98% բոլոր դէպքերի). իսկ կանանց մօտ՝ վիժմունքով և արգանդահոսութեամբ։ Մահացութիւնը ծաղկից հասնում է 42% և աւելի։

Եւրոպայում՝ շնորհիւ ծաղկի պատուաստի՝

լաւ են ներգործում. այս տարի բժշկութիւնը ես սկսել եմ օրինակ վերցնելով մեր մի ուրիշ յիմար գիւղացուց, որը ինձնից շատ ու շատ խելօք դուրս եկաւ։ Բժշկելու ապպարատները և դեղերը տարածում է մեր շրջանում Իգդիրի մանր վարկի ընկերութիւնը. շնորհիւ նրա կառավարչի՝ Կ. Խոջայեանթեանի եռուն գործունէութեան, մենք այժմ գրեթէ ամեն գիւղում, ուր բամբակ կայ, բերել ենք տուել սրսկիչներ, ծծումբ և մեծ եռանդով բժշկում ենք. աջողութիւնը աչքառու է։

Ես իսկոյն նամակ գրեցի Թիֆլիս՝ Մ. Փրիդոնեանի գրասենեակը՝ ուղարկելու Գալուստին սրսկիչի պահեստի մասերը։

— Մի հատ մի գրէք, այլ երկու հատ. թող մէկն աւել լինի. թանգ ու էժանին մեկ մի տուր. գրէք՝ թող երկուսը գայ,—խնդրում էր խօսակիցս։

Այնուհետև նա անցաւ արհեստական պարարտանիւթերին. ինչ բան է սուպերֆօսֆատը, Թոմաս շլակը, կաինիտը. ինչքան կը գնայ մի դեսեատինին, ինչպէս պարարտացնել, ինչ կարժենայ, երբ սկսել, քանի անգամ, ինչպէս է ազդում նա և ինչն է պատճառ պարարտացման և այլն.—այս հարցերը խելացի յաջորդականութեամբ և մանրամասնօրէն տալիս էր ինձ Գալուստը։

Երկու ժամից աւելի տևեցին մեր զրոյցատրութիւնները, որ գրաւել էր մի քանի երիտասարդ գիւղացիների ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնը։

Շուտով անցանք ինձ հետաքրքրող ցորենների տեսակների խնդրին։

Նա տուեց ինձ մի շարք բացատրութիւններ և առաջարկեց, որ—եթէ միայն շոգից շատ չեմ նեղվում—իսկոյն գնանք արտեր և տեղն ու տեղը տեսնենք եղած տեսակները։

Գնացինք։ Ճանապարհին նա ինձ տանում էր մէկ այս արտ, մէկ միւս. հարց ու փորձ էր անում պատահողին, անում իր դիտողութիւնները, հացահատիկներից ժողովածուիս համար փնջեր էր կազմում, մըտնում այս ու այն կալը, խուրձերը շուռ ու մուռ տալիս, հասկեր հանում և ինձ հաղորդում զանազան հողերի ազդեցութեան, ջրելու, ծաղկելու, հասկ գցելու մասին իր արած շատ հետաքրքրական դիտողութիւնները։

Ես հիացած էի նրանով։

Ի՞նչ աննման գիւղատնտես դուրս կը գար սրանից. որտեղ, ինչպէս է կազմակերպվել սրա մէջ այս ոգին, հետաքրքրութիւնը, դիտողութեան, համեմատութեան ընդունակութիւնը։

Գլխումս անցած այս հարցերի պատասխանը տուեց նա ինձ մի երկու ժամից յետոյ, երբ իր կրտսեր եղբօր հետ միասին, նստած Գալուստի տան լուսաւոր, մաքուր սենեակում, զրուցում էինք։

— Ահա 20 տարի է ինչ ես ապրում եմ գիւղում. հայրս լաւ երկրագործ էր. ես էլ սիրեցի երկրագործութիւնը. սիրեցի մօրս կաթի պէս. հողը չէի փոխի 10 կոկարդի հետ, ամենաբարձր պաշտօնի հետ. ուրիշ բան է այն հողը, որ դու ջրել ես քո ճակատի քրտինքով. դրա գաղտնիքը կարող է իմանալ միմիայն նա, ով արևի տակ խաշվել է, ջրի մէջ թրջվել, քամու առաջ ճաքճքոտվել, ով բեռ է կրել, բեռ քաշել... բայց... վա՜յ այն երկրագործին, որ անգրագէտ է. նա իրա անասունից այն կողմը չի անցնի. հազար տարի էլ մնայ, էլի էն եղն է, էլի էն անասունը։ Եւ ես այդ շուտ իմացայ. իմացայ և գրել-կարդալ սովորեցի. իսկ ամենից շատ սիրեցի ուսում առած, խելք սովորած մարդկանց հետ նստել, վեր կենալ, զրուցել. այդ սէրը իմ մէջ այնքան մեծ էր, որ երբ լսում էի, թէ մի ուսումով մարդ է եկել, իսկոյն մօտը կը գնայի, կը խօսէի, հարց ու փորձ կանէի, տուն կը բերէի և նրան կը լսէի։ Աստուած վկայ, ես մի բան էի միայն ուզում՝ առաջ գնալ, լոյս տեսնել, աշխարհից խէրն ու շառը ճանաչել...

— Բայց... բայց ոչ բարով ճանաչէի,—ասաց նա, ախ քաշելով։

— Ինչո՞ւ, ի՞նչ պատահեց,—հարցրի ես։

— Ինչ պատահեց. էլ ի՞նչ պատահէր. իմ այս ծարաւը, սէրը կրակ դառաւ, ընկաւ մեր տունը, քանդեց նրան։

— Ես չէի հասկանում նրա ակնարկները։

— Գիտէ՞ք ինչ. բանից դուրս եկաւ, որ ես յեղափոխական եմ եղել, և յեղափոխութիւնը կրակ գցեց իմ տունը. երկու անգամ խուզարկել են ինձ, տասնեօթ ամիս բանտ եմ նստել, որպէս «սօցիալիստ», և այդ, գիտէք ինչու, որովհետև ես ուզեցել եմ առաջադիմել, մերոնց նման չը լինել...

— Բայց իրօք դուք յեղափոխական էք եղել,—հարցրի ես շատ լուրջ կերպով։

— Քաղաքական մօքով՝ երբէք. ես, ճիշդ է, լսում էի խելօք մարդկանց, լսում էի նրանց ասածները, բայց... բայց իմ խելքը բան չէր կտրում նրանից. իսկոյն զգում էի, որ նրանց ասածը թէև շատ լաւ բան է, բայց մեզանում անիրագործելի. հողերը համայնացնենք, բաժանենք խեղճերի մէջ, հաւասար աշխատենք, հաւասար ուտենք։ Շատ լաւ, աննման. բայց ի՞նչպէս. շատ հող ունեցողը, իր հողը յօժար կամքով իր աղքատին չի տայ, իսկ ոյժով, զոռով խլելը անհնարին բան է և, ինձ թւում է, անարդար. մի՞թէ մի անարդարութիւն վերացնելու համար մի ուրիշ անարդարութիւն պէտք է գործել։ Ես տեսայ, որ դա անց չէր կենալու։ Ես, գոնէ այդպէս եմ կարծում ճանաչելով մեր գիւղը, մեր մարդը։ Բայց արի ու տես, որ ինձ յեղափոխական դարձրին գիտէք ովքեր, հէնց մեր գիւղացիք. նրանք մատնեցին ինձ։

— Ինչո՞ւ, չէ որ դուք յեղափոխական չէիք, իսկ նրանք այդ գիտէին։

— Ինչո՞ւ. այ թէ ինչու. նախանձից, սև նախանձից. նրանք տեսնում էին, որ ես առաջ եմ գնում, գիւղում ձայն եմ ուզում ունենալ, տեսնում էին, որ եկող գնացող՝ մեր գիւղում մեր տանն է գալիս, հանգիստ առնում, և հէնց իրանք մեր գիւղացիները գնացող-եկողին իմ տունն էին ուղարկում և յետոյ նախանձից մատնում կառավարութեանը։ Այսպէս է գիւղը, սիրելի պարոն,—շարունակեց նա. գիւղը իր համագիւղացու առաջադիմութիւնը տեսնել չէ կարողանում և իսկոյն ուզում է նրան գլխի վրա բերել. իսկ դրա համար այժմ հարկաւոր է միայն մի բան՝ ասել թէ այս-ինչը յեղափոխական է. պրծաւ գնաց։ Ոչ փաստ, ոչ քննութիւն. բանտ կը տանեն, և քո տունն ու տեղը, մնալով անտէր, կը քանդվի և ահա հէնց այդ են ուզում քո համագիւղացիները. իսկ յետոյ, երբ գործը կը պարզվի, դու կազատվես, այլ ևս ուշ է. տունն ու տնտեսութիւնդ քանդվել են, դու պարտքերի մէջ ես ընկած։ Իսկ դա է, ահա դա է նրանց նպատակը, որ դու քանդվես, առաջ չը գնաս, քարանաս, իրանց նման մնաս։

— Իսկ այժմ, ի՞նչ էք անում դուք այժմ։

— Այժմ ես գիւղում ապրելով՝ գիւղից ձեռք եմ քաշել, ամիսը մի անգամ գիւղամէջ չեմ մտնում. քաշված տանը՝ ընկել եմ արտիս ու բամբակիս վրա. ոչ գիւղի խէրին եմ խառնվում, ոչ շառին. բայց երևակայեցէք, որ այդ էլ նրանց դուր չէ գալիս. նրանք տեսնում են, որ ես իմ գործով պարապելով էլ դարձեալ առաջ եմ գնում և..., և գիտեմ, որ ինձ դարձեալ մի շառի մէջ են գցելու մեր գիւղացիները։

— Հապա էլ ինչ շառ, երբ ոչ մի գործի չէք խառնվում,—հարցրի ես։

— Ինչպէս, այ, օրինակ, դուք մեր գիւղն եկաք և մեր տանը իջաք. իսկ դա քիչ է։

— Բայց չէ՞ որ իրանք՝ գիւղացիները ինձ ցոյց տուին քո տունը, տուին քո անունը։

Նա ծիծաղեց։

— Այո, և իրանք էլ կը գնան և կասեն ձեր մասին, թէ մի թունդ յեղափոխական եկաւ Գալուստի տուն, գիշերը մնաց այնտեղ և...

Ես սարսափեցի «օրինակելի» հայ գիւղից։

Ես նոր միայն իմացայ, թէ ինչու իմ խօսակից, ում որ պատահում էր, կանգնեցնում և ասում էր, թէ ես գիւղատնտես եմ, եկել եմ ցանքերին, բամբակին, «չոփին» նայելու, ցորեն ժողովելու։

Նա ուզում էր իմ գալուստը հանել այն վտանգաւոր խորհրդաւորութիւնից, որ կարող էր գիւղում նոյնիսկ թշնամիների աչքում կասկածների առիթ տալ։

Չը նայած Գալուստի թախանձանքին, նոյն օրը ճաշից յետ ես դուրս եկայ «ամենալաւ» հայ գիւղից... Ա. Աթանասեան թէ հիւանդացումը և թէ մահացութիւնը ծաղկից՝ նշանաւոր կերպով պակասել են։ Ահա մի փոքր աղիւսակ.

	Մինչև պատուաստ մտցնելը	Պատուաստից յետոյ
Ներքին Աւստրիայում	2,484	340
Տիրոլում	911	170
Բրանդենբուրգ	2,181	181
Բեռլինում	3,442	176
Սիլեզիայում	5,812	198

Այդպիսով՝ մի քանի տեղերում ծաղկից մեռնում էին 30 անգամ աւելի, քան այժմ, մինչև պատուաստի ներմուծումը։ Ծաղկապատուաստումը գտել է 1796 թ. Ժէննէր (Jenner), որը շատ տեղերում պարտադիր է դարձած։ Ստատիստիկան ցոյց է տալիս պատուաստի յոյժ մեծ կարևորութիւնը. ահա երկրորդ աղիւսակը. Flinzer բերում է յետագայ տեղեկութիւնները.

Շեմնիցում—որը ունէր՝ 64,255 բնակիչ, որոնցից համաճարակից առաջ պատուաստուած էին՝ 53,891 (83,87%), 5,712 չը պատուաստուած (8,89%) և 4,643՝ առաջուց ունեցած ծաղիկ (7,24%), ծաղկով հիւանդացել են՝ 3,596 (5,60%), որոնց մէջ պատուաստուածներից՝ 953=1,61%, իսկ չը պատուաստուածներից 2,643=57,23%։ Ընդամենը՝ քաղաքում 13,881 ընտանիք, որոնցից 2,102-ում՝ (15%) եղել է ծաղիկ։

Այդ թւերից՝ 2,67% հիւանդացողներից՝ ընկնում են այն ընտանիքներին, ուր եղել է պատուաստ բոլոր անդամներին, և 12,48% ընտանեաց, ուր պատուաստ չէ եղել։

Այն ընտանիքներում, ուր եղել է պատուաստ, ծաղկով հիւանդացել է 3,92%, չը պատուաստուածների մէջ՝ 39,11%։ Այդպիսով՝ մէկ դէպք ծաղկի գալիս է 26 ընտանիքների, ուր չէ եղել պատուաստում, իսկ պատուաստուածների մէջ՝ մէկը՝ 255 ընտանիքի վրա։

Ահա այն փաստերը յօգուտ պատուաստման, որը հանել եմ ձեռիս տակ ունեցած—ամարանոցում (Կիսլովոդսկ)—վերոյիշեալ ձեռնարկից*)։

Յիշվեց, որ բորբութիւնների մէջ շատ մեծ տոկոս են կազմում կուրացածները և խլացածները, որոնց թիւը, ինչպէս յայտնի է, մեզ մօտ շատ և շատ է։ Բազմաթիւ շրջիկ աղքատներ և աշուղներ կուրացել են՝ գլխաւորաբար ծաղկից, որովհետև միւս գլխաւոր պատճառը կուրութեան՝ սոսունակը կանանց սեռական գործարանի—հեշտոցի (влагалища)—երբ երեխան ծնվելիս, նրա աչքերը վարակվում են սարսափելի բորբոքմամբ և, յաճախ մնալով՝ առանց կանոնաւոր բժշկութեան (անկանոնը անվում է, ինչքան կամենաք) վերջանում է աչքերի կուրութեամբ։ Բարեբաղդաբար մեզ մօտ նման դէպքերը շատ հազուագիւտ են։

Մենք միանգամայն համաձայն ենք, որ հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել պատուաստի տարածման վրա, չը խնայելով ոչ մի միջոց, թէ կամաւոր պատուաստիչներ պատրաստելով և թէ ձրի պատուաստ (մայխայ) բերել տալով, որը շատ չնչին արժողութեան բան է։

Պատուաստիչներ կարելի է պատրաստել մեր ուսումնարանների երկու սեռի սաներից, որոնցից շատ մասը՝ կամ քահանայ, կամ, մանաւանդ ուսուցիչ-ուսուցչուհիներ են լինում, որոնք ցրվում են զանազան խուլ անկիւնները։ Իսկ պատուաստման չնչին արհեստը այնքան դիւրին է, որ շատ մեծ հեշտութեամբ կարելի է կազմակերպել այդ բանը թէ ուսումնարաններում և թէ նրանցից դուրս պայմաններում։

Փաչյոյս ենք, որ Ախալցխայի բժիշկները ամեն բան արած կը լինեն, որ ծաղիկը ահագին զոհեր չը տանի քաղաքի անմեղ երեխաներից։ Ի վերջոյ՝ պէտք է շնորհակալ լինել Վ. Մամիկոնեանից, որ իր հետաքրքրական յօդուածով՝ Մոսկվայից՝ յարուցել է մի վերին աստիճանի կարևոր հարց, որի վճիռը, թէ բարեգործութեան և թէ ազգային տեսակէտից, շատ մեծ նշանակութիւն ունի։ Անտարակոյս՝ մեր բարեգործական և կուլտուրական ուսումնարանական վարչութիւնները լրջօրէն կը նայեն յիշեալ հարցին և ինչ որ կարելի է կանեն, որպէսզի ի՛սկ որ անմեղ մանուկները, մեր դժբաղդ և տգէտ հայ տարրը, եթէ ոչ ազատված, գոնէ մեծապէս թեթևացած լինի վերոյիշեալ աղէտներից, թէ երեխաների մեծ մահացութիւնից և թէ նրանց ֆիզիկապէս քայքայումներից — կուրութիւն, խուլութիւն, անդամալուծութիւն և այլն—որոնց առիթով յիշվեց վերև։

Բժ. Բ. Աղասարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Գերմանական միպար եւ հայկական անկիրթ գիւղեր

Գանձակ, 24 յուլիսի

Շրջելով Ղազախի, Բորչալուի և Գանձակի գաւառները մարդ պատահում է անտարբերութեան, անգիտակից վերաբերմունքի դէպի կեանքը, մեռելութեան, յուսահատութեան, և եթէ մի որևէ նորութիւն է երևում, այդ էլ յաճախ մակերեսային է լինում ու ժամանակաւոր։

Որքա՜ն մեծ տարբերութիւն կայ հարեան հայ, թուրք և գերմանացի ազգերի կենցաղի, գործելակերպի միջև։

Մտէք Գանձակից մի քանի քայլ հեռաւորութեան վրա գտնվող Ելէնէնդորֆը և կը հիանաք այդ գաղութի մաքրութեան, կարգ ու կանոնի վրա։ Գերմանացիք գիտեն աշխատել, մարդավայել ուտել, հագնվել և ապրել։ Այդ գաղութն ունի դեղատուն, բժիշկ, ուսումնարան, հիանալի լայն ու մաքուր փողոցներ, որոնց երկու կողմերը, կարգով տնկված են ծառեր. սրանց մի մասը պտղատու են։ Ոչ ոք իրաւունք չունի ձեռք տալու պտղին, հակառակ դէպքում տուգանքի կենթարկվի երեք րուբլու։ Դժուար թէ սրանց հասարակական որոշումները խախտող լինի։ Այս ծառերի պտուղները ծախվում են և փողը գործադրվում է հասարակական կարիքներին։

Գողութիւն ասված բանը սրանց մէջ գոյութիւն չունի։ Այգիների ցանկապատն ընդհանուր է և ո՛վ կը յանդգնի իր հարևանի տանձից, խնձորից մի հատ անգամ վերցնել։

Իսկ հայերի մօտ, օրը ցերեկով մտնում են այգիները, բանջարանոցները քանդում, քաղում և ամեն ինչ տակն ու վեր անում։ Եւ եթէ տէրը վրա հասնի ու գողին համարձակվի մի խօսք ասել, կը ծեծվի կամ կը սպանվի։

Ասածներիս ապացոյց։ Գետաշէն գիւղում օրը ցերեկով, մի հասակաւոր մարդ մտնում է մի այգի և սկսում քարուքանդ անել։ Այգապան ծերուկը դուրս է գալիս և գողին նախատում։ Խօսակցութիւնը փոխվում է կռւի։ Գողն ուժեղ է լինում, խեղճ այգեպանին ծեծում է շատ։ Վերջինս ձեռի ցաքատը գցելիս վիրաւորում է գողին, գողն էլ այգեպանին։ Մարդիկ են հասնում և մի կերպ ազատում։ Այս դէպքը գողի որդին իմանալով գալիս է այգեպանի կնոջը գտնում և անխղճաբար ծեծում. և անշուշտ կը սպանէր, եթէ մարդիկ վրա չը հասնէին։ Կնոջ ձեռքը կոտրված էր, կողերի ոսկորները ջարդված, ողջ մարմինը սևացած։ Ահա այս կնոջն էր, որ պրիստաւի և բժշկի մօտ էր բերում։

Ահա մեր վարք ու բարքից մի նմուշ. մի գիւղ-հասարակութիւն, որ այսպիսի անդամներից է բաղկացած, ինչ առաջադիմութիւն կարող է ցոյց տալ։ Ճիշդ է, եթէ ցանկանանք, կարող ենք մեր մէջ վատերին զսպել, կարգի բերել, բայց մեզանում ցանկացողներ չը կան, եթէ կան էլ՝ աջակիցներ չունեն։

Փորստէր

—

Գիւղական կասսա

Տաշտուն գիւղ (Զանգ. գ.), 25 յուլ.

Սրանից 3—4 տարի առաջ. 1907—8 թ., Բագւում ապրող տաշտունցիների մէջ միտք յղացաւ հիմնելու մի գիւղական կասսա, որպէսզի հնարաւոր լինի մասամբ թեթևացնել իրանց գիւղացիների ծանր լուծը։ Կասսայի նպատակն էր գիւղում շտեմարան հիմնել և հասարակական խանութ բաց անել։ Եւ սակայն ցաւալի է ասել, որ իր առաջադրած նպատակին չը հասաւ յիշեալ կասսան, որովհետև այդ կուլտուրական համակրելի ձեռնարկութեան գլուխ կանգնած գիւղացի երիտասարդները գժտվեցին։ Արդեօք ինչն էր ստիպում այդ պարոններին քանդել այն բարի նպատակը, մի՞թէ շատ մեծ գումար էր ամսական մի-մի ր. կասսա մուծնել՝ իրանց սև օրվայ համար։

Տաշտունցին միշտ յետ է մնացել իր հարևանից և յետ էլ կը մնայ, քանի համագիւղացիների միջև չը կայ համերաշխութեան։

Մակար Զաքարեան

—

Վարդապետական նոր ձեռնադրութիւն

Վաղարշապատ, 25 յուլիսի

Երէկ ս. Գայիանէի վանքում քահանայութեան աստիճան ստացան ճեմարանաւարտ դաշբուռունցի Աբէլ Աբրահամեան և Երևանի թեմականաւարտ երևանցի Ռուբէն Մանասեան սարկաւագները։ Վերոյիշեալները սարկաւագութիւն էին ստացել այս տարվայ յունիսի 4-ին նոյն եկեղեցում Մեսրոպ եպիսկոպոսից, ուրեմն ընդամենը 50 օր սարկաւագութիւն արին։ Պատարագիչը և ձեռնադրողն էր Յուսիկ արքեպ. Տէր-Մովսիսեանը, որ պատարագը վերջանալուց մի կէս ժամ յետոյ վերոյիշեալներին վեղար տալով աբեղութեան կոչումն տուեց և ապա ներկայացրեց տեղապահին։

Այդ օրը պատարագին և ձեռնադրութեանը ներկայ էր Վաղարշապատի, Երևանի և շրջակայ գիւղերից եկած երկսեռ մեծ բազմութիւն։ Ի միջի այլոց ներկայ էր նաև պրոֆ. Վօէյկօվ, ճեմարանի տեսուչ Բագրատ վարդապետ և երկու ջուխտ մի կէնտ վարդապետներ։

Մի քանի օրվայ զով եղանակին կրկին յաջորդեցին շոգ օրերը։ Արևի տակ տաքութիւնը հասնում է C.-ի 50°-ի։ Պղնձի և կժերի մէջ եղած ջուրը համարեա եռման աստիճանին է հասնում։

Վ. Ք. Աղազադեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—օ—

ԸՆՏՐՎԵԼԻՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑՈՒՆ

I

Մեր մամուլի անսանձ յարձակումներն ամեն անձնաւորութեանց և հոգևորականների վրայ՝ այն դրութեան մէջ են դրել հենց մեր լրագրութիւն և հայ ժողովրդին, որ այսօր սար ու ձոր ընկած փնտռում ենք այնպիսի մի կաթողիկոսացու, որ արժանաւոր լինի Լուսաւորչի գահին։

Եթէ մեր մէջ մամուլի ազատութիւն լինէր այն չափով, ինչ Անգլիայի մէջ, մենք երբէք չէինք կարող կաթողիկոս ունենալ, որովհետև ոչ մէկին արժանաւոր չէինք կարող կաթողիկոս համարել մեր ծայրայեղ և անտեղի պահանջներով ու յարձակումներով։

Տուէք մեզ մի մարդ, որ օժտված լինի մեծամեծ առաւելութիւններով, և մենք նրա ամենափոքր պակասութիւնների պոչից բռնած այնքան ուռեցնենք, որ հասարակութիւնը նրա անունը զզւանքով միայն լսի և փախչի։

Մենք երկինք ենք բարձրացնում այն մարդուն, որին համակրում ենք. և դժոխք ենք իջեցնում նրան, ում չենք համակրում. մենք չենք մտնում դրանց արժանաւորութեանց մէջ։

Մենք դառել ենք ծայրայեղ կուսակցական ազգ և գլխաւորապէս կիրքն է մեզանում դեր խաղում. և մենք չենք էլ կարող կուսակցական ազգ լինել, քանի որ շատ ենք դեսպոտ։ Գտնվում ենք միշտ մենք արբած դրութեան մէջ, և գինու ազդեցութիւնը, մեր դեսպոտիզմն է որ ոտի տակ տալով տապալում, փշրում ենք ամեն բան։

Այն լուրջ մարդը—լինի դա պրոֆեսոր, փիլիսոփայ, գիտնական և այլն—չէ կարող մտնել այս մթնոլորտի մէջ՝ եթէ փոքր ինչ պատուասիրութիւն ունի, քանի որ եթէ մէկը համակրի, անշուշտ երկուսը նրան ցեխոտելու են։ Այն ժամանակ՝ ամեն բան մի կողմ դրած՝ միայն ինքնապաշտպանութեան պիտի դիմի։ Եւ եթէ մէկ կողմն ուզենայ ճշմարտութիւնը դուրս բերելով յաղթանակը տանել, էլ վերջ չի լինելու։ Այդպիսի պայմաններում միակ միջոցը հեռանալն է։

Փնտռեցէք ամեն չարիք սրա մէջ. էլ ինչո՞ւ էք մեղադրում, թէ գրքեր և լրագիրներ չեն կարդացվում այն չափով, ինչ հարկաւոր է. էլ ինչո՞ւ էք մեղադրում, թէ գրականութիւնը փոքրացել է, ինչպէս և ինտելիգենցիան։ Ո՞վ կարող է աջողութիւն գտնել այսպիսի հանգամանքներում։

Մի առժամանակ ենթադրենք, թէ անյարմարը՝ յարմարաւոր արինք, և կառավարութիւնն ու ժողովուրդը ընդունեցին, որ բացի բարձր հոգևորականութիւնից՝ մեր միւս՝ աշխարհական դասակարգերից էլ կարելի է կաթողիկոս ընտրել։ Բարեհաճեցէք այդ կանդիդատների ցուցակն առաջարկել և դուք կը տեսնէք, որ շատ կարճ միջոցում ժողովուրդը, հետևելով մամուլի կուսակցական ուղղութիւններին, եկաւ այն եզրակացութեան, որ ոչ մէկին արժանաւոր կաթողիկոս չէ կարելի ընդունել, քանի որ ոչ մէկ կանդիդատ առանց ցեխոտվելու, մաքուր չէ կարող դուրս գալ կուսակցութիւնների յարձակումներից։

Ուրեմն ոչ հոգևորական և ոչ աշխարհական դասերից մենք չենք ունենալու այնպիսի մի անձ, որ հասարակութեան համակրութիւնը ունենայ, և կաթողիկոս ընտրենք։

Մեր կաթողիկոսացուներից պահանջում են, որ լինեն նուրբ քաղաքագէտ, լաւ հռետոր, լաւ լեզուագէտ, իրաւաբան, անպայման բարոյական, ազգի և եկեղեցու պատմութիւնը լաւ իմացող և այլն և այլն։

Մենք ունենք ամեն դասակարգերի մէջ շատ մեծ թւերով կաթողիկոսացուներ, և միևնոյն ժամանակ չունենք ամբողջ հայ ազգի մէջ գոնէ մի հատ կաթողիկոսացու, որ ունենար այն կատարելութիւնը, ինչ պահանջվում է միմիայն Աստուծուց։ Եւ այս խոշոր պակասութեան համար է, որ մեր ամբողջ պատմութեան մէջ չենք գտնում զանազան ճիւղերի մէջ լուրջ գիտնականներ, որովհետև դէպի միմեանց սէր չունենալով, միութիւն չունենալով՝ միմեանց այպանել, միմեանց ծաղրել ենք, միմեանց միտք և կարծիք յարգել չը կամենալով՝ մատնվել ենք բարձր գիտութեան մէջ կատարեալ ամայութեան։ Բայց մենք ունեցել ենք միութիւն մի ճիւղի մէջ բոլոր դասակարգերում և շնորհիւ այդ միութեան մենք հասցրել ենք մեր եկեղեցու կարգ ու կանոններն իր շարականներով, արարողութիւններով և այլն այնպիսի բարձր աստիճանի, որ ոչ մի քրիստոնեայ ազգ չունի, և դրանով կարող ենք պարծենալ։ Եթէ հնումը այս միութիւնը չը լինէր և եթէ այսօրվայ նման կուսակցութիւններով զբաղված լինէին մեր նախնիք, գուցէ այսօր մեր եկեղեցին էլ գոյութիւն չունենար, որովհետև մէկը միւսին անուշադրելով պիտի հեռանային ասպարէզից։

Որովհետև այնպէս է տնօրինված, որ պէտք է բարձր հոգևորականների շրջանից ընտրվի կաթողիկոսը, մի՞թէ չենք կարող գտնել դրանց մէջ այնպիսին, որ համապատասխան լինի մեր արդի ամենահարկաւոր պահանջներին։ Այո, կան. միայն կրքերը, կուսակցութիւնները մէկ կողմ շպրտելով, միահամուռ կարելի է համաձայնութեան գալ, որ եկեղեցին և ժողովուրդն օգտվեն։

Մեր կաթողիկոսացուից չը պէտք է պահանջենք, որ լինի գերմարդ, մասնագէտ ամեն ճիւղերի մէջ, ինչպէս լեզուագիտութեան, քաղաքագիտութեան, իրաւաբանութեան և այլն։

Մեր ապագայ կաթողիկոսը պէտք է լինի 1) եկեղեցական կարգ ու կանոնները լաւ իմացող. 2) նեղ կուսակցական հաշիւներից դուրս. 3) տգէտ և անարժան քահանաների անպայման չը հաստատող, մանաւանդ եթէ դրանք խնամիութիւնների ընտրութիւնից են եղել։ Ինչքան վատ տպաւորութիւն է գործում, երբ եկեղեցի էք գնում և լսում աւետարանի ընթերցում, որ ոչ միայն ժողովուրդը չի հասկանում, այլ նոյն ինքն ընթերցող քահանան, և այլն և այլն. 4) ընտրութիւններն այնպիսի կարգ ու կանոնի մէջ դնող, որ ժողովրդի ազատ կամքը դուրս գայ և ոչ բռնի և արհեստական ձևերով ընտրվի այնպիսին, որ կարելի է կուսակցական մանեօվրաներից է և միևնոյն ժամանակ անարժան. 5) կարգ մտցնել ամեն եկեղեցական խաւերի ու դասերի մէջ. այս 15—20 տարվայ ընթացքում ինչեր չեղան. դէպքեր եղան, երբ կատարեալ անիշխանութեան հասաւ ամեն ինչ. և այդպիսի անցքերից յետոյ ժողովուրդը սառչում է եկեղեցուց և մի տեսակ թերահաւատութեամբ վերաբերվում. 6) կալուածքներն այնպիսի արդիւնաւոր դրութեան մէջ դնող, որ եկամուտներից կարելի լինի այնքան օգտվել, որ ժողովրդին շուտ-շուտ դիմումն չը լինի այս կամ այն կարիքի համար։

Ոչ թէ վերև յիշածներս, այլ ամեն բան, ինչ կազմում է մեր եկեղեցին, բոլորը կարգ ու կանոնի տակ ձգել. և այս բաներն անելու համար հանճարեղ, տաղանդաւոր մարդ չը պէտք է փնտռել, այլ բաւական է, որ ընտրվածը բարի կամք ունենայ և հսկողութեան ցանկութիւն, ինչպէս և շրջապատված լինի անաչառ, անկաշառ և գործունեայ մարդկանցով։

Գոնէ այսպիսի լուրջ հարցերում մէկ կողմ ձգեցէք ձեր անձական և կուսակցական հայեացքները, միահամուռ կերպով գործեցէք յօգուտ ազգի և բարի դիտաւորութեամբ մօտեցէք ընտրութիւններին, բռնութիւն և ճնշումն մի գործէք ընտրութեան ընթացքում, առաջարկեցէք կանդիդատներ՝ առանց անուանարկելու մէկին կամ միւսին. ժողովուրդը չի սխալվի և կընտրի արժանաւորին։ Ներսէս կաթողիկոսին նոյնպէս ընտրեց ժողովուրդը, և այն ժամանակ կուսակցութիւններ չը կային. և եթէ գոյութիւն ունենային այսօրվայ նման տգեղ կուսակցութիւններ, գուցէ Ներսէսը չընտրվէր, որովհետև ամենքն էլ գիտեն, որ բռնութեան ու ճարպիկ մանեօվրների շնորհիւ յաճախ ընտրվում են այնպիսիները, որոնք յետոյ դուրս են գալիս բոլորովին անյարմար։ Եւ այս՝ ոչ թէ միայն կաթողիկոսական ընտրութեան մէջ, այլ մեր ամեն ընտրութեանց մէջ է նկատվում։ Բալթ

(Վերջը միւս անգամ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այս տարի զինուորակոչութեան ենթակայ են Կովկասից. — Բագուի նահանգ՝ 417 մարդ, Գանձակինը՝ 1678 մ., Քութայիսի նահանգ և Բաթումի ու Սուխումի շրջաններ՝ 3,737 մ., Թիֆլիսի ն.՝ Զաքաթալայի շրջանով՝ 3,415 մ., Երևանի ն.՝ 2,172 մ., Դաղըստանի շրջ.՝ 89 մ., Կարսի շրջ.՝ 534 մ., Կուբանի շրջ.՝ 2,062 մ., Թերեքի շրջ.—սրա թւում նաև 100 հոգի օսեթիններ 753 մ.՝ Սև ծովեան շրջան՝ 182 մ.։

◆ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի դիւանատանը մշակվում է մի նախագիծ, Արմաւիրում արհեստաւոր դպրոց բանալու համար, որը կունենայ դպրոցական հաստատութիւնների երրորդ կարգի արտօնութիւններ։

◆ Թիֆլիսի քաղաքային ընտրողների ցուցակները ստուգող դումայական մասնաժողովը որոշել է ուղարկել թերթերի խմբագրութիւններին, ոստիկանամասերին և քաղաքային առևտրատնտեսական վերահսկիչների գրասենեակներին Թիֆլիսի յատակագծերը, ընտրողական 7 քաղաքամասերի բաժանումներով, և արտօնեալ ընտրողների ցուցակները։

◆ Ռազմավիրական ճանապարհի Գուդաուր և Կօբի կայարանների միջև գտնվող մի վայրում կան երկաթէ բաղադրութիւն պարունակող աղբիւրներ։ Այդ աղբիւրները շահագործելու նպատակով մի խումբ գերմանացի դրամատէրեր կապալով են վերցրել 18 տարով, տարեկան 600 րուբլով։ Նրանք միանուագ վճարել են Կօբիի հասարակութեանը 1000 րուբլի։

◆ Հրեայ ձայնաւորներ ունենալու հարցի առիթով կարող ենք հաղորդել, որ համաձայն քաղաքների կանոնադրութեան՝ հրեայ ձայնաւորները չեն ընտրվում ընդհանուր ընտրութիւնների ժամանակ, այլ տրվում են հրեայ ազգաբնակութեան կողմից ցանկալիների անունները, ոչ աւել քան երկու հոգու, որոնց անունները քաղաքային դումայի կողմից քննութեան առնվելուց յետոյ՝ քաղաքային վարչութեան կողմից ուղարկվում են նահանգական իշխանութեանը ի հաստատութիւն։

◆ Յուլիսի 28-ին, բարեգործ Դ. Զ. Սարաջեվի մահվան 40-օրեակի առիթով, Դիդուբէի եկեղեցում մատուցվեց պատարագ և ապա կատարվեց հոգեհանգիստ, ներկայութեամբ հանգուցեալի իւրայինների, գործարանների ծառայողների և բանուորների, այլ և վրաց հասարակական հաստատութիւնների և խմբագրութիւնների ներկայացուցիչների։ Ներկայ էին նմանապէս ազնուականութեան պարագլուխները, քաղաք. վարչութեան անդամները և բազմաթիւ հասարակութիւն։

◆ Ժող. լուս. մինիստրութիւնը հաստատել է այն ծրագիրը, որով արտասահմանի բարձր կրթարաններում սովորած անձինք պետական քննութիւն տալիս՝ մանրամասն հարցաքննութեան պիտի ենթարկվեն ռուսաց պատմութիւնից։ Նրանք պիտի ունենան տեղեկութիւններ ռուսաց կայսրութեան, պետական հաստատութիւնների և այլ հիմնարկութիւնների մասին։

◆ Յուլիսի 31-ին, Գորիում իրաւաբան Ա. Գվալաձէն վրացերէն լեզուով կը կարդայ մի դասախօսութիւն՝ «Դաղըստանի պատմութիւնը և Շամիլը» թեմայով։

◆ Շորապանի գաւառի Սաչխէրի աւանում վրաց դասախօս Գ. Ռօրաքիձէն կը կարդայ մի դասախօսութիւն Շօթա Ռուսթավէլիի «Ընձենաւորը» անմահ պօէմայի մասին։ Դասախօսութեան արդիւնքը կը յատկացվի տեղական գրադարան-ընթերցարանին։

◆ Յուլիսի 28-ին տեղի ունեցաւ Վրաց Գիւղատնտեսական Ընկերութեան խորհրդի նիստը, նախագահութեամբ Վ. Ի. Ռցխիլաձէի։ Նիստի ժամանակ որոշվեց շնորհակալութիւն յայտնել այն բոլոր անձանց, որոնք իրանց կողմից թանգարժէք գրքեր էին նուիրել Ընկերութեան գրադարանին։ Բացի այդ՝ ժողովը որոշեց անկետային թերթիկներ ուղարկել առհասարակ գիւղատնտեսութեամբ պարապողներին, պարզելու գիւղատնտեսութեան վիճակը Վրաստանում։

◆ Քութայիսում այս օրերս կատարվել է հոգեհանգիստ հանգուցեալ Փ. Քօրիձէի յիշատակին։ Հոգեհանգստեան կարգից յետոյ քահանայ Դօլաբերիձէն բնորոշել է հանգուցեալին որպէս ազգային և եկեղեցական երգերի մշակող։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Կարս, 27 յուլիսի

Նորերս մեզ մօտ եկաւ Սեւումեան-Արաքսեան դերասանական խումբը և մտադիր է տալ մի շարք ներկայացումներ։

Առաջին անգամ խաղացվեց Օստրովսկիի «Անմեղ մեղաւորներ» պիէսը երէկ երեկոյեան։

Թէպէտ խաղն անցաւ սահուն, սակայն պիէսի չափազանց կրճատման պատճառով հասարակութեան վրա չը թողեց ուժեղ տպաւորութիւն։ Դահլիճում կար բաւականին ժողովուրդ։

Երկրորդ ներկայացումը կայանալու է ամսիս 28-ին։ Կարօ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՐԵԿԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԻԹՈՎ

—

«Մշակի» № 150-ում Նորեկը Զարջոյից մի նամակ է տեղաւորել «Աստրախանի թեմակալ առաջնորդի հակառակորդներին» խորագրով։ Հակառակորդներից մէկը՝ Աստրախանի Ծխականն է։

Նամակագիրը պաշտպանում է առաջնորդին։ Ու շատ լաւ է անում։ Ինչո՞ւ չը պաշտպանի, եթէ նա արժանի է պաշտպանութեան։

Աստրախանի առաջնորդին, աւելի ճիշդ՝ նրա գործունէութեանը, ես մօտիկից ծանօթ չեմ. հետևապէս՝ ո՛չ լաւ կարող եմ ասել, ոչ՝ վատ։ Բայց Զարջոյից ուղղված նամակը շատ հեռու է առաջնորդին պաշտպանելու հնարաւորութիւնից. այնքան նա կաղում է պաշտպանութեան հարցում։

Նորեկն ասում է.

1) «Մի տեղ, որ ընտրութիւն կայ, այնտեղ չը պէտք է սխալմունքներ առաջանան»։

Բայց իրականութիւնն ասում է, որ շարունակ առաջանում են։ Ընտրութեամբ չէ՞ր Խրիմեանի կաթողիկոսութիւնը. ընտրութեամբ չէ՞ր Իզմիրլեանի կաթողիկոսութիւնը. մէկը մեզ յետ տարաւ՝ իր անվարչականութեամբ. միւսն անտէր թողեց մեզ, իր վատառողջութեամբ։ Ընտրութեան հարցում սխալները ո՛չ միայն հաւանական են, այլ և՝ անխուսափելի։ Մանաւանդ, երբ ընտրում է ո՛չ թէ մարդկանց մի փոքր խումբ, ինչպէս՝ մի քաղաքի հասարակութիւն, մի դպրոցի վարչութիւն, մի եկեղեցու ծուխ, այլ՝ մի ամբողջ թեմ։

2) «Երբ մէկին թեմական առաջնորդ են ընտրում, իսկ 2—3 տարուց յետոյ բողոքներ բարձրացնում, դա կը նշանակէ, որ ընտրութիւնները գիտակցաբար չեն կատարված»։

Ինչո՞ւ անպատճառ գիտակցութեանը պէտք է վերագրել այդ հանգամանքը, և ո՛չ ընտրվածի այս կամ այն յատկութեանը, ուղղութեանը, քաղաքականութեանը կամ, վերջապէս՝ հազարգլխեան ընտրողների անհասկացողութեանը կամ անտարբերութեանը և այլն։

2—3 տարուց յետոյ առաջնորդի դէմ բողոք բարձրացնելը ո՛չ թէ նշանակում է «ընտրութիւնը գիտակցաբար չէ կատարված»,—մի բան, որ կարող էր և՛ տեղի ունենալ,—այլ այն, որ առաջնորդը արդէն ճանաչված է ու գնահատված։ Ո՞ւշ է ճանաչված, որովհետև շուտ չէր կարող ճանաչվել...

3) «Միթէ մի ամբողջ թեմի հայութիւնը կարող էր տղայամիտ լինել»։

Ամբողջ թեմի հայութիւնը չէր կարող տղայամիտ լինել, բայց նրա որոշ մասը կարող էր։ Կարող էր տղայամիտ լինել, օրինակ, այս կամ այն գաւառի, քաղաքի, գիւղի հասարակութիւնը... կամ դրանց որևէ մասը։

Վերջապէս զարմանալու ի՞նչ կայ. ընտբողներ ենք ունեցել, որոնք ընտրական գործի վեհութիւնն ու սրբութիւնը մի կողմ դրած՝ անձնական գծուծ հաշիւներով են առաջնորդվել... Ե՛լ հաշւի չեմ առնում այնպիսիներին, որոնք խաղալիք են դառնում ճարպիկների ձեռքում, և յաճախ նոյնիսկ քուէ տալ չեն իմացել...

---

*) Պրոֆ. Ռիբինգ «Курсъ гигиены», Риббингъ 1894 թ.։

4) «Ի՞նչ է սրբազանի յանցանքը... Մի քահանայի Թոյլ չէ տուել քարոզելու (շատ լաւ է արել. այդ նրա իրաւունքն է)...»։

Ես կասեմ՝ նրա իրաւունքն է, բայց ո՛չ անպայման։ Ո՞ւր կը գնայ, եթէ Թեմակալները առաջնորդվեն լոկ այն մտքով, թէ իրաւունքն իրանցն է։ Այդպիսի մօնօպօլիա ո՛վ է տուել նրանց... Երբ, սարկաւագ ձեռնադրելիս, եպիսկոպոսը տուել է մեր ձեռքն Աւետարան, տուել է՝ ո՛չ միայն կարդալու ժողովրդի ականջում, այլ և... քարոզելու։ Մանաւանդ՝ երբ մենք քահանայ էլ ենք...

Միակ դէպքը, երբ առաջնորդը կարող է արգելել՝ քարոզել այս կամ այն քահանային, այն է. երբ վերջինը դադարած է քահանայագործութիւնից։ Փակել քահանայի բերանը՝ ամենաքիչը նշանակում է չիմանալ, թէ ինչի՛ համար է տրված եպիսկոպոսութիւնը...

5) «Թեմի կրթական գործերը երեսի վրա են Թողնված (Թող այդ մասին հոգան փաստաբանները, բժիշկները...)»։

Այստեղ արդէն Նորեկը էլ չի դատում, չի՛ պատասխանում, խօսողի բերանը ձեռքով է փակում։

Երկու կէտ էլ՝ Ծխականի խօսքերից («Մշակ», № 139)։

1) «Տեղիս Աղքատախնամ Ընկերութեան հաշիւները քննող մասնաժողովը վաղուց չէ քննել Ընկերութեան երեք տարվայ հաշւեմատեանները, և Թեմակալը չէ ձգտում այդօրինակ անկարգութիւնը վերացնել»։

Նորեկը այս կէտի կողքով անցնում, գնում է, չը տեսնող ձևանալով։ Մինչդեռ ամեն ընկերութեան մէջ՝ հարցերից ամենագլխաւորը դրամականն է։

2) «Արժանայիշատակ Իզմիրլեանի Թաղման հանդիսում՝ առաջնորդի նսեմացնող դիրք բռնելը»։

Եթէ ճիշդ է այս կէտը, այդ դէպքում Աստրախանը շատ ողորմելի Թեմ է։

Մի Թեմ, որ գիտէ կուլ տալ վսեմ գործերի մէջ՝ նսեմացնող հանգամանքները...

Է. Ք. Ն.

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ատրպետը զայրացել է, որ ես համարձակվել եմ նրա գրախօսութիւնը Օրմանեան սրբազանի գրքի մասին («Սուրհանդակ» № 334) անբարեխղճութեան կամ անգիտութեան արդիւնք համարել, և ահա նա կրկին ասպարէզ է իջել «Սուրհանդակի» № 343-ում իբրև թէ պատասխանելու ինձ։ Իրօք նրա նոր յօդուածը միայն ապացոյց է, որ իմ մեղադրանքը նրա հասցէին ճիշդ է եղել։

Ես, ի հարկէ, իմ անձնական արժանապատւութիւնից ստոր կը համարեմ պատասխան տալու հայհոյանքներին։ Չեմ խօսի նաև Ատրպետի յարուցած դիպլօմների և դիպլօմաւորների մասին։

Ինձ հետաքրքրողը խնդրի բուն էութիւնն է և ես կաշխատեմ կարճառօտ կերպով ցոյց տալ, որ Ատրպետը իր գրախօսականը գրել է անբարեխղճութեամբ և անգիտութեամբ, երբ ասում է.

«Բայց շատ ընկճվեցինք, երբ նկատեցինք, որ մեր հնաւանդ առասպելախառն աւանդութիւնները առանց քննութեան, զտման և բիւրեղացման, գրեթէ սովորական ձևով գրի անցած էին, ճիշդ այն ուղղութեամբ, ինչ մեզ Թողել են պատմագիրները հազարաւոր դարերից ի վեր։ Սկսեալ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալներից մինչև 20-րդ դարի սկիզբը (երես 1—122) գրեթէ անփոփոխ մեզ տուել է ճիշդ այն ձևով, ինչ որ յայտնի է մեզ մեր պատմագիրներից»։

Այս առիթով մենք «Մշակի» մէջ (№ 144) յայտնել էինք, որ Օրմանեան սրբազանի տուածը խորին պատմական քննութեան արդիւնքներ են, և աւելացրել էինք, թէ «Ատրպետի համար բաւական կը լինէր հէնց միայն Օրմանեանի տուած կաթողիկոսների ցանկն իրանց Թւականներով՝ համոզվելու համար, որ Օրմանեան առանց գիտական քննութեան չէ տուել մեզ «պատմագիրներից արդէն յայտնի» եղելութիւնները»։

Տարակուսանքները փարատելու համար մի քանի օրինակներ կը յիշեմ, որոնցից կերևայ, որ Օրմանեանը պատմագիրների տուածը նոյնութեամբ չէ հաղորդել մեզ, այլ նրա տուածը պատմական քննութեան արդիւնքներն են։

1) Հայ պատմագիրները Դ. դարի կաթողիկոսների կարգն ու ժամանակագրութիւնը տալիս են ըստ այսմ. Լուսաւորիչ 30 տարի, Ռստակէս 7 տարի, Վրթանէս 15 տարի, Յուսիկ 6 տարի, Փառներսէհ 4 տարի, Ներսէս Մեծն 34 տարի։ Լուսաւորչի գահակալութիւնը դնելով 301-ին, ստացվում է հայ պատմագիրների տուած հետևեալ ժամանակագրութիւնը. Լուսաւորիչ 301—331, Ռստակէս 331—338, Վրթանէս 338—353, Յուսիկ 353—359, Փառներսէհ 359—363 և Ներսէս Մեծն 363—397։ Բայց այս պատմագիրների տուած ժամանակագրութիւնը հիմնովին սխալ է, և պատմական քննութեան արդիւնքը Օրմանեան սրբազանի տուածն է, որը հետևեալն է. Լուսաւորիչ 302—325, Արիստակէս 325—333, Վրթանէս 333—341, Յուսիկ 341—347, Փառէն 348—352, Ներսէս Մեծ 353—373։ Հայ պատմագիրների ասելով՝ Ներսէս Մեծը մասնակցել է Կ. Պօլսի երկրորդ տիեզերական ժողովին 381 Թւին, իսկ նորագոյն քննութիւնն ապացուցել է, որ Ներսէս Մեծը մեռել է 373 Թւին։ Ահա նորագոյն քննութեան արդիւնքը տալիս է մեզ Օրմանեան։ Թէև այսքանն էլ բաւական կը լինի հասկացողի համար, բայց մի երկու օրինակ էլ բերենք։

2) Մինչև այժմ ընդունված էր, որ Բաբգէն կաթողիկոսը 491 Թւին Վաղարշապատում ժողով է գումարել և քաղկեդոնականութիւնը մերժել։ Օրմանեանի գրքի մէջ կը գտնէք պատմական քննութեան արդիւնքը՝ Բաբգէնի ժողովը 506 Թւին Դուինում։

3) Մինչև այժմ սովորաբար ընդունված էր Ներսէս Բ.-ի Դուինի ժողովը 524-ին դնել։ Օրմանեանը տալիս է ճշգ Թւականը՝ 555. Ներսէս Բ.-ը 524-ին կաթողիկոս չէ կարող եղած լինել. նրա տարեթիւն է 548—557։

4) Մինչև այժմ ասվում էր, թէ Մովսէս Եղւարդեցին 551-ին ժողով է արել և հայոց Թւականն հաստատել։ Պատմական քննութիւնն ասում է, թէ Մովսէս կաթողիկոսը 551-ին չը կար։ Նա ընտրվել է միայն 574-ին։ Օրմանեանն էլ այդ է տալիս։

5) Վրաց բաժանումը դրվում էր մինչև այժմ 594-ին կամ 596-ին։ Այժմ ապացուցված է, որ այդ բաժանումն եղել է 609-ին, և Օրմանեան այդ է տալիս մեզ։

Եւ այլն և այլն։

Թող մեզ սխալ չը հասկանան։ Մենք չենք ասում, թէ այդ բոլոր քննութիւնները կատարել է ինքը՝ Օրմանեան սրբազանը։ Նա այս գրքում ի մի է ամփոփել թէ իր սեփական քննութիւնների և թէ ուրիշների ուսումնասիրութիւնների ճշգրիտ արդիւնքները։ Չը պէտք է մոռանալ, որ առաջին անգամ հայ կաթողիկոսների փոքր ի շատէ ճիշդ ցանկն էլ Օրմանեան սրբազանն է տուել մեզ (տպված 1899 Թ. «Արարատի» դեկտեմբերի համարում և այնտեղից ապա շատ տեղեր մտած)։

Կարծում ենք՝ սրանով ապացուցված եղաւ, որ Ատրպետը բացի անբարեխղճութիւնից՝ անգիտութեամբ է յայտարարել, թէ Օրմանեանը տալիս է այն, ինչ «յայտնի էին մեզ մեր պատմագիրներից»։

Բաւական զաւեշտական է նաև Ատրպետի ստանձնած դերը՝ «Ժողովրդի իրաւանց դէմ կատարված ոտնահարութիւնները սանձահարելու»։ Այդպիսի ոտնահարութիւն Ատրպետը նկատել է Օրմանեանի այն խօսքերի մէջ, ուր նա ասում է, թէ հաւատոյ պահանջների և խորհրդոց մատակարարութեան համար ձեռնադրութիւն և աստիճան պէտք է։ Ատրպետը եզրակացնում է. «Այդ խիստ դիպլօմատիքական դարձուածքով Օրմանեան ձգտել է ցոյց տալ, որ եկեղեցու աստուածաբանական խնդիրների որոշողն ու սահմանողը հայ կղերական դասն է»։ Մենք տեսանք, որ Օրմանեան սրբազանն ասել է միայն, թէ «եկեղեցւոյ վարչութեան և մատակարարութեան վերաբերեալ գործերը աշխարհական տարրին մասնակցութեամբ կամ գործակցութեամբ կը կառավարուին», բացի պատարագ անելը, ժամերգութիւն կատարելը, մկրտութիւն, պսակ, Թաղում անելը և այլն, որոնց համար «ձեռնադրութիւն և աստիճան» անհրաժեշտ է։ Թէ ինչպիսի տրամաբանութիւն է հարկաւոր այսքան պարզ բանից եզրակացնելու համար, թէ «Օրմանեանը ձգտում է ցոյց տալ, որ եկեղեցու աստուածաբանական խնդիրների որոշողն ու սահմանողը հայ կղերական դասն է», այդ որոշել Թողնում եմ ընթերցողներին։ Մինչև այժմ ընդունված տրամաբանութեամբ այդպիսի եզրակացութիւն անԹոյլատրելի է և անհնարին։ Եւ Օրմանեան սրբազանի գիրքը կարդացող և նրա առաջաբանը գրող Ֆրանսիացին յիրաւի շատ լաւ ըմբռնում է այս գրքից հայոց եկեղեցու ժողովրդական-ազգային կազմակերպութիւնը (եր. 10), առանց որևէ ոտնձգութիւն նկատելու հեղինակի կողմից դէպի այդ ժողովրդական ոգին ու ուղղութիւնը։

Եւ ինչպէս կարող է բարեմիտ քննադատը այդպիսի բան նկատել Օրմանեան սրբազանի գրքի մէջ, որտեղից նա կարող է հայ կղերական դասի գերիշխանութեան ձգտում վերագրել նոյնիսկ աստուածաբանական խնդիրների որոշման և սահմանման մէջ, երբ որ Օրմանեան սրբազանը կարդացածը հասկացողի համար շատ պարզ լեզուով գրում է. «Բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու մէջէն հայ եկեղեցին է, որուն մէջ ժողովրդական հոգին աւելի ճշմարտութեամբ և աւելի ընդարձակութեամբ կը փայլի։ Նա բոլորովին օտար է՝ եկեղեցւոյ մէջ կղերական կամ քահանայական բացարձակ տիրապետութիւն հաստատելու դրութենէն, որ այնչափ վնասակար եղած է կաթոլիկ Եւրոպիոյ, և եղծած է այն համերաշխութիւնը, որ պէտք է տիրէր եկեղեցւոյ պաշտօնեաներուն և հաւատացեալներուն, հոգևոր հովիւներուն և հօտերուն միջև։ Աշխարհականներուն եկեղեցական վարչութեան մասնակցելու իրաւունքը հայոց եկեղեցւոյ առաջին դարերէն սկսելով կը տեսնուի պատմութեան մէջ, և իր արմատներն հաստատուած են քրիստոնէութեան ճշմարիտ և նուիրական աւանդութեանց մէջ։ Ազգային ժողովներու գործերուն մէջ կը տեսնանք, որ առաջնորդ իշխեցող վեհապետներ և իշխան նախարարներ, աւելի ետքերը գլխաւոր և նշանաւոր ազգայիններ, վերջէն ընտրեալ պատգամաւորներ, մէկ խօսքով ամեն ժամանակի դրութեան համեմատ ժողովրդի ներկայացուցիչ եղողներ, եկեղեցական ժողովներու մէջ նստած են եպիսկոպոսներու և վարդապետներու հետ, մասնակցած են նոյն իսկ վարդապետական եւ բարեկարգական խնդիրներու վճռաբանութեանց եւ որոշմանց (համեմատէ՛լ Ատրպետի ասածի հետ), և իրենց ստորագրութիւնները դրած են ժողովական գործերու ներքև, իբրեւ ժողովի իսկական անդամ ներ։ Այդ հնաւանդ սկզբունքը կը տիրէ տակաւին ազգային սովորութեանց մէջ, և ասով է, որ կարդարանայ աշխարհականներու մասնակցութիւնը եկեղեցական գործերու մէջ, և նրանց անդամակցութիւնը պարբերական ժողովներու մէջ։ Հայաստանեայց ուղղափառ եկեղեցին ժողովրդական կամ աշխարհական տարրին իրեն հետ գործակցութիւնը ապահովելով՝ առջևն առաւ այն երկու մեծ վնասներուն, որոնք եկեղեցւոյ կացութիւնը կը վտանգեն [illegible] մէջ. ասոնցմէ մէկն է կղերականութիւնը ազգային գործոց մէջ, և միւսը՝ անտարբերականութիւնը կրօնական գործոց հանդէպ» (էջ 185 186)։

Ահա Օրմանեանի «ոտնձգութիւնը» ժողովրդական իրաւանց դէմ, որ «սանձահարելու» է դուրս եկել Ատրպետը։ Վստահանում ենք կարծել, որ այս տողերն ևս վրիպել են Ատրպետի «Թերթող» և չափազանց շտապող աչքերից, ապա թէ ոչ՝ դըժուար թէ նա իրան դնէր այնպիսի աննախանձելի դրութեան մէջ, ինչպիսին է Օրմանեանի վերև մէջ բերված զուտ ժողովրդական մտքերի հանդէպ հայ եկեղեցու ժողովրդական ոգին պաշտպանելը։

Աւելորդ ենք համարում այլ ևս Ատրպետի միւս երկար ու բարակ, բայց մեծ մասամբ ոչինչ չասող նախադասութիւններին պատասխանել։ Իբրև վերջաբան՝ ուրախութեամբ արձանագրում ենք, որ մինչ Ատրպետի գրախօսականի տպաւորութիւնը սրբազան Օրմանեանի գրքի մասին («Սուրհանդակ» № 334) բաւական աննպաստ էր, այժմ՝ մեր գրախօսականին պատասխանելիս («Սուրհանդակ» № 343) նոյն Ատրպետը բաւականից աւելի նպաստաւոր կարծիք է յայտնում նոյն գրքի մասին։ Նա իր վերջին յօդուածում գտնում է, որ «սրբազան Օրմանեանի գործը ներբողի և ջատագովութեան կարօտ չէ. նա անշուշտ բարձր է կանգնած մինչև օրս լոյս տեսած հայ եկեղեցական ձեռնարկներից»։ Այս արդէն մեծ առաջադիմութիւն է Ատրպետի կողմից և նրա այդ գնահատութիւնը Օրմանեանի գրքի մասին շատ արժէքաւոր է՝ հէնց իր նախկին գրախօսականը բնորոշելու համար։ Երուանդ Տէր-Մինասեանց

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թէհրանը դատարկվում է, որովհետև ազգաբնակութիւնը քաղաքից դուրս է գնում, յոյս ունենալով պաշտպանութիւն գտնել օտարազգի դեսպանատներում։ Նախկին մինիստրներից և պաշտօնեաներից շատերը ահաբեկիչների երկիւղից դուրս չեն գալիս իրանց պալատներից։

◆ Նոր կաբինէտը շտապով նշանակում է նահանգապետներ, գլխաւորապէս դեմօկրատներից, որովհետև նոյնիսկ իԹԹիդալիունականները կասկածում են իրանց անդամների վրա։ ԻԹԹիդալիունականները պարսից սահմանադրական չափաւորներն են։

◆ Եփրեմը նշանակվել է Թէհրանի զինւորական կօմէնդանտ և չի մասնակցի նախկին շահի դէմ գնացող արշաւախմբերին։ Նա կազմակերպում է կամաւորների զօրախումբ։

◆ Եփրեմի կարծիքով, հայերը պաշտպանելով Թէհրանը աւելի մեծ ծառայութիւն կը մատուցեն Պարսկաստանին, քան եթէ կռիւ մղեն Մահմեդ-Ալիի դէմ։

◆ Պարսից նախկին կաբինէտի օրով շատ նահանգներ մնացել էին առանց նահանգապետների, որպիսի հանգամանքը դիւրացրեց Սալլար-ուդ-Դովլէի արշաւանքների գործը։

◆ Ամերիկացի Շուստերը ինքն է ուզում այսուհետև վճարել պարսիկ կօզակների ռոճիկները, հակառակ ընդունված սովորութեան։ Ռուս գնդապետ իշխ. Վօդբօլսկին, համարելով այդ հաւատի չընծայումն, հրաժարվում է պաշտօնից։ Այս գործին միջամտել է ռուսական դեսպանատունը։

◆ Ամերիկացի Շուստերը պահանջում է զեղչատու բանկից, որպէսզի առանց նրա գիտութեան չընդունվեն և չը ծախսվեն պետական գումարներ։

◆ Ֆինանսների մինիստրութեան մէջ հերքվում է այն լուրը, թէ իբր պետական բանկը այսուհետև կը կրճատէ կրեդիտը հրէաներին և օտարազգիներին Ռուսաստանում։

◆ Տուլայում, կոմս Բօբրինսկիների կալուածքում տեղի են ունենում ռուս ազգայնականների ժողովներ, մասնակցութեամբ Եվլօգի եպիսկոպոսի, 4-րդ Դումայի ընտրութիւնների առիթով։

◆ Չերնօգօրիան Թիւրքիայից պահանջում է այն 4 միլիօնը, որպիսի գումարը ծախսված է 20,000 ալբան փախստականների պահպանման վրա։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

28 յուլիսի

ՄՕՍԿՎԱ։ Երեկոյեան հրդեհ ծագեց Տիլէ ֆաբրիկայում. վնասները 100,000 ր. են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գնդապետ Նայիմովի և շտաբս-կապիտան Իգնատիևի տրամադրութեան տակ դրվեց Կայսրի 2500 լուսանկարներ՝ փոքրահասակ զինւորացուներին բաժանելու համար։

ՕԴԵՍՍԱ։ Նաւահանգստային վարչութեան կից առևտրի, բօրսային կօմիտէտի և նաւագնաց ընկերութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ կայացաւ խորհրդակցութիւն Սև ծովի նաւահանգիստների միջև նաւային հաղորդակցութիւնները և նաւահանգիստները բարելաւելու եղանակների հարցի համար։ Վճռվեց առաջին հերթին նորմալ նաւահանգիստ կառուցել Սուխումում, ապա Սօչիում, Տուապսէում, Ադլերում, Գուդաուտում, Օչեմչիրում, իսկ վերջը՝ Գելենջիկում, Անապայում և ուրիշ տեղերում։

ԼՕՁ։ Հրդեհը ոչնչացրեց Ռօզենբլատի արհեստանոցը և Լուբիէի ֆաբրիկայի մի մասը. չափազանց վնասվեց երրորդ ֆաբրիկան։ Վնասները 500,000 ր. են։ Առանց աշխատանքի մնացին 800 բանւորներ։

ՄՕՍԿՎԱ։ 90 տարեկան հասակում վախճանվեց «Моск. Лист.»-ի հիմնադիր և խմբագիր-հրատարակիչ Պաստուխօվը, որ Թողեց մի միլիօն կարողութիւն։

ՕԴԵՍՍԱ։ Դատախազի կարգադրութեամբ օրերս պաշտօնից հեռացված խուզարկու բաժանմունքի պետի պաշտօնակատար իշխ. Խէբխէուլիձէի բնակարանում կատարվեց խուզարկութիւն։ Վերցրին Թղթեր և նամակներ։

ԿՈՒՐՍԿ։ Ստարօսկօլի գաւառում գտել են խօլերայով հիւանդ մարդու։

ՆԻԿՕԼԱՅԵՎ։ Իտալիայից եկած գերմանական շոգենաւի վրա գտնվեցին խօլերայով հիւանդ 3 մարդ։

ՄՕՍԿՎԱ։ Բակտերիօլօգիական քննութիւնը ցոյց տուեց, որ յուլիսի 27-ին հիւանդացած մարդը խօլերա չէ ունեցել։

ՕԴԵՍՍԱ։ Քաղաքում երևան հանվեց խօլերայի առաջին դէպքը։

ՍԻՋՐԱՆ։ Երևան հանվեց խօլերա։

ՏՐԻԷՍՏ։ Խօլերայի երկու նոր դէպքեր յայտնագործվեցին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ալեքսանդրօպօլի ԱՐՂՈՒԹԵԱՆ օր. դպրոցի համար հարկաւոր է

ՄԻ ՀՄՈՒՏ ՈՒՍՈՒՑԻՉ

24 ԴԱՍՈՎ՝ բարձր դասարանների մաթեմատիկական առարկաների (12 դ.) և հայոց լեզուի կամ հայոց ու ընդհանուր պատմութեան համար (12 դ.)։

Պայմանների մասին դիմել հոգաբարձութեանը մինչև օգոստոսի 20-ը։

(2.) 743. 2—2

Պատրաստվում է տպագրութեան

Թւաբանութեան

դասագիրք

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց Սիմ. Հովուեան

(օ.մ.) 733. 4—4

Փորձված

խմբապետ-ուսուցիչ

որոնում է խմբապետութեան պաշտօն. ունի ուսուցչական ցենզ, կարող է երգի դասերի հետ աւանդել և այլ առարկաներ։

Հասցէն՝ Гор. Моздокъ, Терск. обл., Типографія Демакина.

(Ե. Հ. Չ.) 739. 3—3

Ախալքալաքի հայոց եկեղեցական երկսեռ դպրոցի համար հարկաւոր են հայոց լեզուի, ռուսաց լեզուի, Թւաբանութեան, բնագիտութեան, աշխարհագրութեան, հայրենագիտութեան

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

դասագինն է 20 ր.։ Գծագրութեան և ձեռագործի վարժուհի 25 դաս, ռոճիկ 400 ր.։

Երգեցողութեան ուսուցիչ և խմբապետ. խմբապետը պէտք է եկեղեցու համար խումբ կազմէ՝ շաբաթ երեկոները, կիրակի առաւօտները և ճաշերին խմբի հետ երգէ եկեղեցում, այլ և ազգային-եկեղեցական տօներին պէտք է պատրաստէ պատշաճ շարականները, որ խումբը եկեղեցում երգէ իր ղեկավարութեամբ։

Խմբապետ-դասատուն ունենալու է 13 դաս երգեցողութեան և 7 այլ դասեր, ընդամենը ռոճիկն է 580 ր.։

Ցանկացողները Թող դիմեն վաղօրօք հետևեալ հասցէով. Ахалкалаки, Попечительству армянской церковно-приходской школы.

(2.) 740. 2—2

№ 4711 ԹԱՆՁՐ ՇՊԱՐԸ (жирная пудра)

դարձնում է երեսի կաշին թարմ, փափուկ ու գեղեցիկ եւ պատրաստված է բացառապէս ամենամաքուր, լաւագոյն եւ ընտրովի նիւթերից, որոնք երեսի կաշուի համար բոլորովին անվնաս են։

Սեփական շահի տեսակէտից՝ գնելիս ուշադրութիւն դարձրէք, որ ձեռք բերէք իսկական № 4711 թանձր շպարը։

№ 4711 օրէնքով հաստատված է։

(20 օգ.) 272854. 2—1

Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի

Վարչութիւնը

յայտարարում է նոր աշակերտների ընդունելութեան մասին 1911—1912 ուսումնական տարվայ համար.

Ե. և Զ. դասարաններում տեղ չը կայ։

Դ. դասարանում կընդունվեն 8 հոգի, Գ. դասարանում՝ 30 հոգի։ Գ. դասարան ընդունվողների տարիքը 14-ից անց չը պէտք է լինի։

Խնդրատուները պէտք է ներկայացնեն ծննդեան, ծաղկի և ուսման վկայականներ մինչև օգոստոսի 25-ը, որ օրից սկսվելու են քննութիւնները։

Թէ նոր և թէ հին աշակերտներն անպատճառ պէտք է ներկայացնեն սահմանված գրաւականը՝ համաձայն Ճեմարանի կանոնադրութեան 84-րդ յօդուածի։

(Ե. Հ. Չ.) 737. 3—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.